


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԷՄԻԼ ԴԻԼՈՆ
ԻՐԱՎԻՃԱԿԸ ԹՈՒՐՔԱՅԱՅԱՍՏԱՆՈՒՄ



9(47.925)

2-47

h2.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՍՒԱ**

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՌՆԱԳՐԱՆԻ ՕՐՈՇԱՐԵՍ

4 խիզ

դասամիասն

6317

**ԷՄԻԼ ԴԻԼՈՆ
ԻՐԱՎԻՃԱԿԸ ԹՈՒՐԶԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**



ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԻ
ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մատենաշար

թիվ 4

ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԸ
Լ. Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ (Նախագահ), Ս. Կ. ՊՈՂՈՍՅԱՆ,
Վ. Գ. ՍՎԱԶԼՅԱՆ, Վ. Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Թարգմանությունը ռուսերենից
(Մոսկվա, 1896 թ.)՝ Գ. Ց. ԼԻՆՈՅԱՆԻ

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Ծագումով իռլանդացի էմիլ Դիլոնը ծնվել է 1855 թ. մարտի 9-ին Դուբլինում: Բարձրագույն կրթությունը ստացել է Անգլիայում, իսկ այնուհետև փիլիսոփայության և արևելյան լեզուների դասախոսություններ է ունկնդրել Ֆրանսիայի և Գերմանիայի լավագույն համալսարաններում: «College de Eranc»-ում նա մասնակցում է Ռեմանի դասընթացներին, իսկ Թյուբինգենի և Լայպցիգի համալսարաններում խորությամբ զբաղվում համեմատական բանասիրության ուսումնասիրմամբ: Գերմանիայից Դիլոնը մեկնում է Ռուսաստան, Պետերբուրգի համալսարանում ստանում արևելյան լեզուների մագիստրոսի կոչում, ապա հրավիրվում է Խարկովի համալսարանի համեմատական բանասիրության ամբիոն, ուր աշխատում է չորս տարի: Առանձնահատուկ ուշադրություն նվիրելով գրաբարին և հայ հին գրականությանը, Դիլոնը շուտով քարգմանում և ռուսերեն լույս է ընծայում եղիշեի «Վարդանի և հայոց պատերազմի մասին» գիրքը*, ինչպես նաև «Հայերենի և իրանական լեզվախմբի առնչությունները» մենագրությունը: Հայոց լեզուն և գրականությունը ավելի հիմնավոր ուսումնասիրելու նպատակով Դիլոնը, այնուհետև, մեկնում է Վենետիկ, որտեղ այդ առարկաներն ուսանում է Մխիթարյան միաբանությունում: Հայոց լեզվին նվիրված իր աշխատությունը հրատարակելուց հետո, 1886 թ. ստանում է այդ միաբանության անդամի կոչում: Վենետիկից վերադառնալով Անգլիա, Դիլոնը անգլիական գիտական հանդեսներում հրապարակում է համեմատական բանասիրության, հայերի և հայ գրականության վերաբերյալ մի ամբողջ շարք մասնագիտական հոդվածներ վաստակելով ժանրակշիռ գիտնականի համբավ: Մայրենի լեզվից բացի, Դիլոնը հիմնավորապես տիրապետում էր ռուսերենին, ֆրանսերենին,

* Египше, "Война армян против персов". перевод и примечания. Харьков, 1881. (Эмилий Диллен, Армянские этюды, II).

գերմաներենին և գրաբարին: Շնորհալի և վաստակաշատ լրագրող էր Դիլոնը, նրա թղթակցությունները, որոնք աչքի էին ընկնում արժարժվող նյութի հիմնավոր իմացությամբ և շարադրանքի ճշմարտացիությամբ, համընդհանուր ուշադրության արժանացան Անգլիայում և կարեկցանք հարուցեցին Չայաստանի վիճակի նկատմամբ, որի տառապանքները, Գլադստոնի հեղինակավոր արտահայտությամբ՝ գերազանցում էին Բուլղարիայի՝ վերջին պատերազմին նախորդած սարսափները:

1895 թ. փետրվար-մարտին, որպես Լոնդոնի «The Daily Telegraph» թերթի թղթակից, Դիլոնը մեկնում է Արևմտյան Չայաստան՝ լուսաբանելու տեղի իրադարձությունները: Նա թուրքերի զազանությունները հետաքննողի տքնաջան դերը անասելի դժվարությամբ և վտանգների ենթարկվելով էր կատարել՝ իր ազնիվ առաքելության ճանապարհին ամեն քայլափոխի հանդիպելով թուրքիայի կառավարության հակազդեցությանը: Գրքույկում ներկայացվող բազմաթիվ հավաստի տեղեկություններն աներկբայորեն հաստատում են թուրքիայի կառավարող շրջանների հանցակցությունը հայ ազգաբնակչության զանգվածային կոտորածների կազմակերպմանը:

ԻՐԱՎԻՃԱԿԸ ԹՈՒՐԲԱՀԱՅԱՏԱՏՆՈՒՄ

1

Կա մի գողտրիկ պատմվածք փոքրիկ աղջկա մասին, որը, վախենալով ննջարանի մթությունից, մայրիկին խնդրում է մոմերը դուրս չտանել:

- Ինչի՞ց ես վախենում, անուշիկս,- հարցնում է օրինապահ ծնողը:
- Մթությունից,- պատասխանում է երեխան:
- Բայց հիշիր, թանկագինս, որ այստեղ, սենյակում, քեզ հետ է Աստված, իսկ Աստվածն ինքը՝ լույս է:

Այս անառարկելի խրատաբանությանը հետևած լուսությունից կարելի էր ենթադրել, թե ցանկալի տպավորությունը թողնված է, սակայն, հանկարծ այն խախտում է աղջնակի քնքույշ ձայնը.

- Այդ դեպքում, մայրիկ, Աստծուն վերցրու, իսկ մոմը թող...

Թուրքիայի հայ բնակչության վերաբերմունքը Արևմտյան Եվրոպայի քաղաքակիրթ ժողովուրդների հանդեպ, որոնց շրջանում դաժան տանջանքները և արյունալի ջարդերն անմիջապես արդարացի վրդովմունքի և բարոյական կարեկցանքի հուսադրող դրսևորումներ են հարուցում, շատ նման է այդ անմեղ երեխայի մտքերի ընթացքին: «Մենք կարող ենք առանց ձեր կարեկցանքի և ցավակցությունների էլ յուրա գնալ, եթե դուք երաշխավորեք մեր կյանքի և գույքի անվտանգությունը»: Այսպես է դատում երախտագետ հայը: Երկրի և նրա բնակիչների սոսկալի վիճակին ծանոթ կողմնակի և անաչառ դիտորդը բնականաբար, ավելի առաջ կգնար ու համարձակորեն կպնդեր, որ հրապարակային ժողովներում կարեկցանք արտահայտելը և, այնուհետև, բացարձակ անգործությունը, ոչ միայն ավելի վատ են, քան իրական նյութական օգնությունը, այլև՝ միանգամայն վնասակար: Թուրքերն ի սկզբանե հայերին չեն սիրել, և Սասունի կոտորածը այդ զգացմունքի ուժգնության մի ցայտուն օ-


րինակ է: Այժմ, խայտառակ ստորացումից հետո, որին թուրքիան ենթարկվեց իր զոհերի եվրոպացի բարեկամների կողմից, թուրքերն աստուծ են նույնիսկ Հայաստան անունը և այն կարծիքին են, որ ոչ մի բռնություն չի կարող հագուրդ տալ իրենց վիրավորված ինքնասիրությանը: Երբ էրզրումում օտարերկրյա հյուպատոսները վերջերս վալիի (նահանգապետի) ուշադրությունը հրավիրել էին անարդարության խիստ ակնհայտ մի դեպքի վրա, նա թարգմանիչներին ասել էր, թե թուրքերի կառավարությունը և հայ ժողովուրդը միմյանց հանդեպ գտնվում են ամուսնու և կնոջ վիճակում, և կողմնակի մարդիկ, ովքեր կարեկցում են կնոջը, որի հետ ամուսինը վատ է վարվում, լավ կանեին, եթե ձեռնպահ մնային միջամտությունից: Եվ այդ դիտողությունը միանգամայն արդարացի է, եթե ամուսինները մտադիր են միասին ապրել, որովհետև դաժան ամուսինը միշտ էլ կարող է ժամանակ ու տեղ գտնել չարությունը թափելու իր անօգնական կողակցի վրա: Հենց դա է ներկայումս տեղի ունենում Թուրքահայաստանում

Մուշում, ռուս, անգլիացի և ֆրանսիացի պատվիրակների աչքի առաջ, այն վկաներին, ովքեր արիություն ունեին տերությունների ներկայացուցիչներին ասելու ճշմարտությունը, բանտ էին նետում, և ոչ ոք ձեռք չէր պարզում պաշտպանելու նրանց. այժմ էլ, սուլթանին հպատակ հայերին, օտարերկրյա հյուպատոսներից և քրիստոնյա քարոզիչներից ընդամենը մի քարոզիչ հեռավորության վրա, կախում են ոտքերից՝ գլխի մազերն ու մորուքը իրար կապած, իսկ մարմինները խարանում շիկացած երկաթով ու այլանդակում այնպիսի եղանակներով, որոնց մասին ոչ կարելի է պատմել, ոչ էլ պատկերացում կազմել Անգլիայում. ընդամեն, նրանց կանանց ամուսինների ներկայությամբ անարգում են, իսկ դուստրերին առևանգում ծնողների աչքի առաջ: Եվ այն, ինչ անգլիական մարդասեր ազգը կարող է առաջարկել իր հովանավորյալներին, ընդամենը ցուցադրական վրդովմունքն է ու սին կարեկցանքը: Ավելի լավ չէ՞ր լուրջան մատնել Սասունի կոտորածը և աչք փակել մահվան սարսափների հանդեպ, քան կատաղության աստիճան գրգռել թուրքերին ու հետո նրանց հնարավորություն տալ չարությունն ազատորեն թափելու քրիստոնյաների գլխին, որոնց միակ պաշտպանությունը մեր հուզաբաթախ պերճախոսությունն է:

Թե հայերն ինչ շարժառիթներով են երախտագիտությամբ վերաբերվում Անգլիային՝ գաղտնիք է, որն անմեկնելի կլիներ, եթե մենք ե-

ուխտապարտության տակ չհասկանայինք այնզգացումը, որ հարուցում է ապագա բարերարությունների պատկերացումը: Քանզի մեր միջամտությամբ 1878 թվականից ի վեր ձեռք բերված արդյունքների էութունը զուտ մարդասիրական տեսակետից այն է, որ հայկական հինգ գավառներում հաստատված գազանաբարո կառավարման համակարգի համեմատությամբ հարավային նահանգներում ստրկատիրական հասարակարգի դաժանությունները աննշան չարաշահումներ են թվում: Մենք հանդիսավորությամբ ոչնչացրինք քավարանը և ակնհայտորեն նպաստեցինք դժոխքի ստեղծմանը: Մենք ձեռնամուխ եղանք հետևելու այն բանին, որ Թուրքիայի հայաբնակ գավառներում վատ կառավարման հարուցած չարիքը արագ և վերջնականապես արմատախիլ արվի. բայց մենք ոչ միայն չկատարեցինք այդ պարտավորությունը, որ ստանձնել էինք կամովին՝ չվստահելով Ռուսաստանին, այլև թույլ տվեցինք, որ սխալ կառավարման անկանոն համակարգը շարունակ գարգանա՝ վերածվելով անխնա բնաջնջման դիվային քաղաքականության. և մենք դա թույլ տվեցինք՝ չփորձելով ցուցադրել մեր ուժն ու չհամարձակվելով խոստովանել մեր անզորությունը: Նույնիսկ Սասունի կոտորածը, որ վրդովմունքի բուռն պոռթկումներ հարուցեց անգլիախոս ժողովուրդների շրջանում, միակ շոշափելի ազդեցությունն ունեցավ մեր վերջին լիբերալ կառավարության վրա՝ ընդամենը նրան դրդելով ավելացնել նամակների, հեռագրերի և հյուպատոսական հաշվետվությունների քանակը: Միանգամայն հավաստի է, թեպետև, գուցե ոչ բոլորին է հայտնի, որ լիբերալ կառավարությունը տակավին անցյալ սեպտեմբերին տեղյակ էր այդ կոտորածի գլխավոր փաստերին և մինչև իր հրաժարականը ոչ մի միջոց ձեռքից բաց չթողեց դրանք թաքցնելու համար. ընդամեն, ուշադրության է արժանի այն փաստը, որ տարաբախտ հայերը ներկայումս մատնված են էլ ավելի դաժան հալածանքների և կենդանահերժման: Այդուհանդերձ, մենք անհոգ սպասում ենք ինչ-որ բանի, որպեսզի տեղից շարժվենք: Ժամանակի այդ խայտառակ վատման պատասխանատվությունը, ինչպես մեզ հայտարարում են որոշ քաջատեղյակ քաղաքագետներ, ընկնում է Ռուսաստանի ուսերին, որի «ընդհատակյա խարդավանքը», իրենց իսկ խոսքերով, անօգուտ դարձնում Անգլիայի եռանդագին ձգտումները: «Մոսկվացի դիվանագետների» տխրահռչակ դավերն այնքան պարզորոշ են, որ հարկ չկա անդրադառնալու դրանց: Մշուշապատ ակնարկն անգամ միանգամայն բավական է. կարելի է վստահ լի-

6312



մել՝ կռահունակ հանրությունն ինքը կպատկերացնի միանգամայն ստույգ իրողությունը:

«Ժո՞րժ, ասում ես քեզ ի՞նչն է խանգարում դպրոց գնալ,- հարցնում է մայրը իր քմահաճ որդուն ամռան մի հրաշալի առավոտ:- Ցեխը, մայրիկ:- Ցե՛խը, դու հավանաբար զառանցում ես, որդիս: Փողոցները մաքուր են, որտե՞ղ է այդ ցեխը:- Ցեխն այնքան խորն է, որ հնարավոր չէ տեսնել, մայրիկ»: Գիշտ նույնն է քարոզվում Ռուսաստանի կառավարության «ընդհատակյա դավերի» վերաբերյալ:

Ես խոսում եմ փաստերով: Ես այդ տերության պաշտոնական ներկայացուցիչների հետ տեսակցել եմ Թուրքիայի տարբեր մասերում: Ես հետևում էի նրանց գործունեությանը, դիտարկում նրանց գործելակերպը և ունեի միանգամայն հավաստի տեղեկություններ, որպեսզի կարծիք կազմեի Սասունի կոտորածի՝ այն միակ հարցի նկատմամբ նրանց վերաբերմունքի մասին, որը մինչև օրս ծառացած է տերությունների առջև, և առանց դույզն իսկ տատանվելու պնդում եմ, որ ինչ արգելքների էլ հանդիպեր մեր կառավարությունը իր հայաստանապաստ գործունեության մեջ, դրանցից և ոչ մեկը չի առնչվում «Մոսկվայի խարդավանքներին»: Ռուսաստանը հարեց Սասունի ջարդերի գործը հետաքընելու մեր առաջարկությանը և ճշտիվ ու բարեխղճորեն կատարեց այն ամենը, ինչ խոստացել էր: Նրա ներկայացուցիչները ջանք չէին խնայում պարզելու այդ գործը. ոչ մի անձնական նախապաշարում կամ քաղաքական շահ չէր խոչընդոտում համակողմանի հետաքննության անցկացմանը. մարդիկ, ովքեր անձնապես բարեհաճ չեն հայերի հանդեպ և, ընդհակառակը, շատ են սիրում մահմեդականներին, անվարան իրենց ծայնն էին բարձրացնում առաջինների օգտին. անհարկի չգրգռելով թուրքերին, որոնց հետ ավելի լավ հարաբերությունների մեջ են, քան մենք, նրանք պատմում էին ողջ ճշմարտությունը, և Ռուսաստանն այժմ կարող է խելամիտ դիտորդի հետարքրությամբ սպասել հետագա իրադարձություններին ու բարդություններին:

Հայկական հարցն, անշուշտ, ունի իր քաղաքական կողմը, որի պատճառով անհնար է կռահել, թե Ռուսաստանն ինչ դիրք կբռնի, բայց պետք է ենթադրել, որ ներկայիս թագավորը իր քաղաքականության մեջ կառաջնորդվի միայն արդարության նկատառումներով և բարու ձգտումով: Կարող են, սակայն, առանց տատանվելու ասել, թե Մեծ Բրիտանիան Հայկական հարցը պետք է քննարկի կամ զուտ քաղաքականութ-

յան հողի վրա, կամ՝ բացառապես մարդասիրական մղումներից ելնելով: Մենք չենք կարող անել թե մեկը, թե մյուսը: Մենք չպետք է բացեիքաց ողորմություն առաջարկենք և ծածուկ փորձենք ստանալ դեռևս չնվիրված ու թվացյալ գումարի ընթացիկ տոկոսը: Անօթևանի համար տուն կառուցելով, չպետք է պահանջենք, որ այդ տունը մեզ պաշտպան և պատնեշ ծառայի հնարավոր թշնամիների հարձակումից, որոնց հետ շարունակում ենք վարվել ինչպես բարեկամների և որոնց հրավիրում ենք մասնակցելու այդ շինարարությանը: Ռուսաստանի վերաբերմունքը միանգամայն պարկեշտ է. ավելին, նա անչափ բարեհաճ է, քանի որ հյուրընկալել է գրեթե 20 հազար հայ փախստականների, մինչդեռ մենք, որ բարոյական պատասխանատվություն ենք կրում նրա սահմանների մոտ տիրող աննկարագրելի քաոսի համար, վանեցինք տառապյալներին՝ ցուցադելով մեր սին, բայց աղմկալից կարեկցանքը նրանց հանդեպ և անպագոգոռ խոստումներ տվեցինք միայն:

Մինչդեռ, այս երկրի պարտավորությունը վերին աստիճանի պարզ է. մենք պետք է կամ արագ վերջ դնենք թուրքական Դահոմեայի սարսափներին, կամ հրապարակավ խոստովանենք Հայաստանում մեր պարտավորությունները կատարելու անընդունակությունը և այդու հրաժարվենք Ասիայում թուրքական կայսրության ամբողջականությունը պահպանելու վիթխարի խնդրից: Եթե մենք լուրջ սխալ գործեցինք՝ անցյալ ձմռանը հարուցելով Հայկական հարցը, նախքան հավաստիանալը, թե կարող ենք բավարար կերպով լուծել այն, ապա գրեթե հանցագործություն կատարեցինք՝ թուրքերին տալով անհրաժեշտ ժամանակ իրականացնելու իրենց ոճրապարտ ծրագրերն ու համառորեն երես թեքելով փաստերից:

Նրանք, ովքեր ծանոթ են հինգ գավառների քրիստոնյա բնակչության վիճակին, անվարան կմիանան նման տեսակետին: Իսկ նրանց համար, ովքեր անհրազեկ են, հետևյալ համառոտ ակնարկը կարող է ուսանելի լինել:

II

Հայաստանում թուրքերի գերիշխանությունն սկսվել է փաստորեն 1847 թվականից, երբ Օսման փաշան coup de grace (վճռական հարված) հասցրեց քուրդ բեկերի գազանային իշխանությանը հարավարևելյան հինգ գավառներում (Վան, Բիթլիս, Մուշ, Բայազետ և Դիարբեքիր): Այդ երկարատև ժամանակահատվածը՝ գրեթե 50 տարի, միանգամայն պար-

վորով բաժանվում է նրկու շրջանի խայտառակ կառավարման (1847-1891) և բացահայտ բնաջնջման (1892-1894): Համոզումներն ու խորհուրդները կարող են ծառայել սոսկ որպես առաջին շրջանի համակարգից բխող չարաշահումների դեմ ուղղված միջոցներ. սակայն վերջինի դեմ միայն ուժն է գործում: Այս իմաստով նշված հարցի առթիվ վերջերս լորդ Սոլսբերիի արտահայտած տեսակետը միանգամայն ճիշտ է:

1891 թվականին Բարձր Դուռը, երկյուղելով Հայաստանում խոստացած բարենորոգումների իրագործումից բխող լուրջ դժվարություններից և հնարավոր պատերազմի դեպքում Ռուսաստանին սահմանամերձ գավառներում բնակվող քրիստոնյաների թշնամությունից, որոշեց մեկ կրակոցով երկու նապաստակ խփել և կազմակերպեց բացառապես քրդերից կազմված, այսպես կոչված, համիդիե հեծելազորը: Կայսրության բարձրաստիճան որոշ պաշտոնյաների առաջարկած ծրագրի էությունը հայերին դուրս մղելն էր սահմանամերձ հողերից, ինչպես, օրինակ, Ալաշկերտից, և նրանց փոխարինելը մահմեդականերով, որպեսզի բոլոր հինգ գավառներում առաջինների թիվը կտրուկ նվազեր և, հետևապես, վերանար հայ բնակչության համար հատուկ բարենորոգումների անհրաժեշտությունը, իսկ պատերազմի դեպքում՝ քրդերը գործեին ի հակակշիռ կազակների:

Բնաջնջման բացահայտ քաղաքականությունը ճշգրիտ իրագործվել ու զգալիորեն ընդլայնվել է այդ ժամանակից ի վեր, և եթե շուտափույթ դրան վերջ չդրվի, ապա այն անկասկած կարող է հանգեցնել Հայկական հարցի վերջնական լուծման, որը, սակայն, խայտառակություն կլինի քրիստոնեության համար և քամահրելի ծաղրուծանակ՝ քաղաքակրթության նկատմամբ: Ձորագրված քրդերը թողնվել էին իրենց հարազատ վայրերում, ազատվել ծառայությունից, սպառազինվել, օժտվել դեսպանորդական անձեռնմխելիությամբ և ապահովվել ռոճիկով, որը վճարվում էր Բարձր Դռանը բնորոշ կանոնավորությամբ: Եվ նրանք իրենց առաքելությունը կատարեցին բժախնդիր ճշգրտությամբ. թալանում էին մեծահարուստ հայերին, ավերում տները, այրում հացահատիկն ու անասնակերը, ոչնչացնում գյուղերը, կոտորում անասուններին, առևանգում դեռատի աղջիկներին, անարգում կանանց, բնաջնջում ամբողջ բնակավայրեր և սպանում բոլոր նրանց, ովքեր այնքան արի կամ անխոհեմ էին, որ փորձում էին դիմադրել: Հայերն այժմ երկրագնդի ամենաաղքատ ու ամենաղժբախտ ժողովուրդներից են:

Բայց միգուցե թուրքական իշխանությունները չէի՞ն կանխատեսել, իսկ թուրքական արդարադատությունը հավանություն չի՞ տալիս կատարվածին: Ընդհակառակը, իշխանությունները ոչ միայն ակնկալում էին նման հետևանքներ, այլև աջակցում և օգնում էին դրանք իրականացնողներին, դրդում ու վարձատրում էին հանցագործներին. երբ որևէ հայ համարձակվում էր գանգատվել, ապա պաշտոնյաները, որոնց նա վճարում էր իրեն պաշտպանելու համար, ոչ միայն չէին ունկնդրում նրա ծայնին, այլև գարշելի բանտն էին նետում, ամենաահավոր ու աներևակայելի եղանակներով տանջում, անպատվում հանդգնության և լկտիության համար...

Այժմ ապացուցված է, որ Սասունի կոտորածը եղել է Բարձր Դռան ներկայացուցիչների կանխամտածված գործը և նախապատրաստվել է խնամքով ու ի կատար ածվել անգթորեն, չնայած, այդ սարսափները սահմռկեցնում էին նույնիսկ քուրդ ելուզակներին և կարեկցանք առաջացնում անգամ թուրք զինվորների սրտերում:

Հետևաբար, քանի դեռ Հայաստանը գտնվում է Բարձր Դռան անպատասխանատու կառավարման ներքո, այդ երկրում կյանքի և ունեցվածքի անապահովության համար բողոքելը նույնն է, թե զինվորը արյունալի ընդհարման ժամանակ գանգատվի թշնամու գնդակների լուրջ վտանգավորությունից: Բողոքներ հարուցող նախապայմաններ ստեղծելը հենց այն նպատակն է, որին ձգտում են նրանք, իսկ այն կատարելությունը, որով ձեռք է բերվում փաստացի արդյունքը, գործադրվող մեթոդների համոզիչ ապացույցն է:

Օտարերկրյա մի երևելի պետական գործիչ, որին համոզված թուրքասեր են համարում, վերջերս ինձ հետ մասնավոր խոսակցության ժամանակ նկատեց, որ Հայաստանում թուրքիայի գերիշխան պետության ճշմարիտ բնորոշումը՝ կազմակերպված ավազակությունն է, օրինականացված սպանությունն ու վարձատրվող անբարոյականությունը: Այդ համակարգի դեմ բողոքները կարող են արդարացի և տեղին լինել, բայց ոչ օգտակար: Մարդասերը, բանտ այցելելով, մեծապես կվրդովվի՝ տեսնելով, որ բանտարկյալներից մեկի ձեռքերն ու ոտքերը կապված են, սակայն նա դժվար թե ժամանակ կորցնի բողոքելու վրա, եթե տեղեկանա, որ բանտարկյալը դատապարտված է մահապատժի և շուտով կախաղան է հանվելու:

Բնաջնջման ծրագիրն իրականացնելու առաջին քայլը ժողովրդին

հետևողականորեն աղքատացնելը էր: Դա բնական է մի երկրում, որտեղ պաշտոնյաներն ութ կամ տասն ամիս սպասում են իրենց աշխատավարձին, իսկ հետո էլ պետք է բավարարվեն հասանելիքի մի մասով միայն. «ես մի փարա անգամ չեմ ստացել ահա տասներկու շաբաթ և չեմ կարող նույնիսկ հագուստ գնել ինձ համար»,- բացականչեց մի պաշտոնյա, որին հանձնարարված էր գիշեր-ցերեկ ինձ հետևել երգրումում:- «Ձեզ կանոնավոր վճարե՞լ են ռոճիկը»,- հարցրեցի Քուբեկի հեռագրատան պետին:- «Ոչ, էֆենդի,- պատասխանեց նա,- ահա ութ ամիս է ոչինչ չեմ ստացել. ասենք՝ մի ամսվա ռոճիկ եմ ստացել Բայրամի տոնին»:- «Այդ դեպքում ինչպե՞ս եք ապրում»:- «Աղքատ»:- «Բայց չե՞ որ ձեզ դրամ է պետք սովամահ չլինելու համար»:- «Իհարկե, մի փոքրիկ գումար վաստակում եմ, բայց դա բավական չէ: Ալլահը ողորմած է: Դուք ինքներդ հիմա ինձ դրամ տվեցիք»:- «Բայց չե՞ որ դա վճարված է հեռագրի համար և պատկանում է պետությանը»:- «Այդ գումարը ինձ եմ պահում ռոճիկի դիմաց, այնքան էլ շատ չէ, բայց միշտ էլ այդպիսի փողերը դնում եմ գրպանս»: Այս մարդիկ, իհարկե, փոքր պաշտոնյաներ են, բայց նրանց վիճակն ըստ էության չի տարբերվում պետերի վիճակից. դատավորները, սպաները, փոխնահանգապետերը, վալիները և այլն և այլն, հավասարապես դրամագուրկ են, հաճախ էլ աչքի են ընկնում մեծ ընչաքաղցությանը:

Թախսին փաշան՝ Բիթլիսի նախկին գեներալ-նահանգապետը, բնաջնջման շրջանի բարձրաստիճան թուրք պաշտոնյայի մի հիանալի նմուշ է: Նա սովորություն ուներ բանտ նետել բազմաթիվ հարուստ հայերի՝ առանց որևէ հիմքի, մեղադրանքի կամ, գոնե, պատրվակի: Այնուհետև առաջարկում էր ազատություն՝ խոշոր գումարների դիմաց, որոնք կազմում էին նրանց կարողության մեծ մասը: Վճարումից հրաժարվելու հետևանքը ձերբակալվածների համար լինում էր այն վերաբերմունքը, որի համեմատ միջնադարյան Անգլիայում հրեաների կտտանքները կամ ժամանակակից Յնդկաստանում Ուդա իշխանուհու ներքինիների տանջանքները մեղմ ու չնչին պատիժներ են թվում: Որոշ բանտարկյալներ պետք է ոտքի վրա մնային ամբողջ ցերեկն ու գիշերը, ընդ որում՝ ոչ ուտելիք էին տալիս, ոչ ջուր, և արգելում էին շարժվել: Եթե ուժասպառվելով ուշագնաց էին լինում, ապա սառը ջուրը կամ շիկացած երկաթը շուտով ուշքի էին բերում նրանց, և կտտանքը շարունակվում էր: Քանի որ ժամանակն ու համառությունը թուրքերի օգտին էին, ի վերջո հայերը գոհաբերում էին ամեն ինչ, միայն թե փրկվեին ահավոր տառապանքներից:

Նրանք ստիպված էին կամ ամեն ինչ զոհաբերել, կամ գոռ դառնալ, և, իհարկե, ընտրում էին չարյաց փոքրագույնը:

Բիթլիսի վիլայեթում մի քանի հարյուր հայեր, որոնք դրամ, անասուն ու հաց ունեին, կամայական բանտարկության էին ենթարկվել և, խոշոր կաշառք տալով, ազատվել: Նրանցից ոմանք ի վիճակի չեն եղել անմիջապես վճարելու, ուստի մռայլ գնդամներում պահել էին այնքան, մինչև որ ճարել էին պահանջվող գումարները, իսկ ոմանց էլ սպանել էին: Շուրջ հարյուր հայեր մահացել են միայն Բիթլիսի բանտում: Հետևյալ խնդրագիրը՝ ստորագրություններով, ուղարկվել էր ինձ և, եթե չեմ սխալվում, միաժամանակ նաև Մուշում գտնվող օտարերկրյա պատվիրակներին: Այս փաստաթուղթը, որը կազմելու նախաձեռնողը անվանի մի անձնավորություն էր (նրա անունն ու հասցեն հայտնում եմ), կօգնի պատկերացում կազմելու, թե Բիթլիսի վալին ինչպես էր կառավարում իր գավառները և միաժամանակ «բարեգործություն» անում.

«Մենք՝ թուրքական կառավարությանը անվերապահ հավատարմությամբ ծառայողներս, մանավանդ վերջին տարիներին վատ վերաբերմունքի ու ճնշման ենք ենթարկվում մերթ կառավարության կողմից, մերթ՝ քուրդ ավազակների: Այսպես, օրինակ, անցյալ տարի (1894 թ.) իմ տանը թուրքական ոստիկանությունը հանկարծակի ձերբակալեց ինձ: Տարան Բիթլիսի բանտը, որտեղ ենթարկվեցի վիրավորանքների և ամենասարսափելի չարչարանքների: Չորս ամիս նստելուց հետո ազատվեցի՝ պայմանով, որ վճարեմ 450 ֆ. ստեռլինգ: Այդ գործի համար ոչ մի հիմք կամ պատճառաբանություն չէր ներկայացվել: Տուն վերադառնալով՝ տնտեսությունս գտա անկանոն վիճակում, գործերս՝ բարձիթողի, առանց ապրուստի միջոցների: Իմ առաջին միտքը եղավ դիմել թուրքական կառավարությանը՝ խնդրելու, որ կորուստներս փոխհատուցվեն, բայց հրաժարվեցի այդ մտքից, որպեսզի նորից չդատապարտվեի: Լսելով, որ դուք Հայաստան եք եկել ուսումնասիրելու ժողովրդի վիճակը, աղերսում եմ ձեզ, հանուն Աստծո, ուշադրություն դարձնել իմ գործին»: Ստորագրված է՝ Պողոս Դարմանյան, Մանազկերտի գավառակի Իկնաքաջիա գյուղից:

1890 թվականին Բուլանջիսի Օթանջուր գյուղի տանուտերը, որի անունը Աբդալ էր և, ըստ այդ վայրերում ընդունված չափանիշների, հարուստ մարդ էր, ուներ 50 գոմեշ, 80 եզ, 600 ոչխար, չիաշված ձիերն ու մնացածը: Նրա գերդաստանի կանայք մազերին ու կրծքին ոսկե զարդեր

էին կրում, և նա 50 ֆ. ստեռլինգ հարկ էր մուծում գանձարանին: Ղա 1890 թվականին էր: 1894 թվականին նա աղքատ շինական էր, լավ գիտեր, թե ինչ է կարիքը և մատնված էր սովամահության: Գյուղն ու ողջ գավառակի բնակիչները ենթարկվել էին թալանի, նրանցից խլել էին բացարձակ ամեն ինչ: Մինչդեռ թուրքական իշխանություններն այդ կողոպտմանը նայում էին քաջալերիչ ժպիտով: 1894 թվականի ընթացքում միայն Բուլանդիսի և Մուշի գավառակներում քրդերը քշել-տարել են ավելի քան 10000 գլուխ խոշոր եղջերավոր անասուն ու ոչխար: Այդ համակարգն իշխում էր ամբողջ երկրում. տարբերությունը միայն մանրամասների մեջ է, որոնք կախված են տեղական պայմաններից, բայց միջոցներն ու նպատակը երբեք չեն փոխվել: Դրա հետևանքով բարեկեցությունը իսպառ չքանում է, արագորեն տարածվող աղքատությունը այնպիսի չափերի է հասնում, այնպես անհույս է և այնքան ահավոր իր բարոյական ու ֆիզիկական ներգործությամբ, որ զոհերը համակվում են հիասթափության ազդեցությունից ծնված ու խենթության հասնող վայրի արիությամբ*:

Վալիի կամ գեներալ-նահանգապետի և զափթիեի կամ հարկահավաքի միջև գոյություն ունեն վարչական սանդղուղքի բազմաթիվ աստիճաններ, և նրանցից յուրաքանչյուրն ու բոլորը միասին վերցրած շորթում են ձեռներեց հայերի ունեցվածքի զգալի մասը: Անշուշտ, գոյություն ունեն առավել վատթար աղետներ, քան ունեցվածքի կորուստը, և սառնասիրտ անգլիացիներն իրենց համակրանքը ավելի շուտ կպահեն նրանց համար, ովքեր նման դժբախտություններ են կրել: Սակայն, անկասկած, ունեցվածքի կորուստն էլ պակաս դժբախտություն չէ, երբ դրա պատճառը ոչ թե հանցագործությունն է, դիպվածը կամ անհոգությունը, այլ անամոթ և լկտի անարդարությունը՝ տուժածի 15 կամ 20 շնչից բաղկացած ընտանիքի հանդեպ: Հետևյալ փաստերը ցույց են տալիս, որ ունեցվածքի կորուստը շատ հաճախ անհամեմատ ավելի մեծ դժբախտություններ է պատճառում:

1892 թվականի հուլիսին, նորին մեծություն համիդիեի հեծելազորի մի կապիտան՝ Իդրիս անունով, ղասնաքլի ցեղի պարծանքը, եղբոր հետ գալիս և անասնակեր է պահանջում Համենշեյքի բնակիչներից: Երկու հայ ավագների՝ Ալոյին ու Խաչատուրին կարգադրում են պատրաստել

* Ես մի ուրիշ տեղ տվել եմ մի կողմից վատ կառավարման շրջանում հայերի բարեկեցության, մյուս կողմից՝ բնաջնջման ներկա փուլի տառապողների դժգոհության համեմատական բնութագիրը, բայց այս հետաքրքիր նյութը երբևէ չի քննարկվել պատշաճ լիարժեքությամբ:

պահանջվող խոտը: Նրանք պատասխանում են, որ ամբողջ գյուղում այդքան խոտ չի գտնվի: -«Ճարեք առանց այլալուծյան, թե չէ ձեզ կգնդակահարեն», - ասում է Իդրիսը: - «Բայց անասնակեր չկա և չենք էլ կարող ստեղծել»: - «Դե որ այդպես է, մեռե՛ք», - բղավում է «քաջարի» կապիտանը և տեղնուտեղը սպանում հայերին: Իդրիսի դեմ ձևական բողոք էր ներկայացվել, և կայմականը, ի պատիվ իրեն, նրան ձերբակալել էր ու 4 շաբաթ պահել բանտում, բայց հետո, երբ ազնվագարն քուրդը տվել էր սովորական կաշառքը, ազատ էին արձակել: Նույն Բուլանդիսում այդ տարի բացահայտ ու անպատիժ շուրջ 30 նման սպանություն էր կատարվել:

III

Սկզբում հայերը հակված էին բողոքելու, երբ նրանց հարազատները կամ բարեկամները սպանվում էին. ընդամին, նրանք առաջնորդվում էին այն հույսով, որ գոնե որոշ դեպքերում արդարադատությունը կդատապարտի մարդասպանին և այդպիսով կվախեցնի մյուսներին:

Բայց շուտով նրանք հրաժարվեցին այդպես վարվելուց՝ հետևյալ տարաբնույթ փաստերի ազդեցությամբ. 1892 թ. հուլիսին Ահմեդ-օղլու-Բաթում անունով մի քուրդ գնում էր Գևանդուկ (Խնուսի գավառակ), բռնի տանելով Մուքո անունով մի հայի չորս եզները: Քրիստոնյաներին գենք կրելն արգելող օրենքը 1892 թվականին դեռևս չէր գործում ամենայն խստությամբ, և Մուքոն, որն ատրճանակ ուներ, տեսնելով, որ քուրդը նույնպես մտադիր է կրակել, նշան է բռնում ու սեղմում հրահանը: Երկու կրակոցները որոտում են նույն ակնթարթին, և երկուսն էլ տեղնուտեղը ընկնում են մեռած: Դրանից հետո տեղի է ունենում հետևյալը. գյուղի 19 հայերի, որոնցից ոչ ոք պատկերացում չուներ պատահածի մասին, ձերբակալում են, ապա հայտարարում, թե բաց կթողնեն, եթե մեծ կաշառք տան: Նրանցից 10-ը վճարում են և ազատ արձակվում, իսկ մնացածները հրաժարվում են կատարել այդ պահանջը և դեռ երկար ժամանակ պահվում են բանտում: Մինչդեռ, քրդերից ոչ մեկը պատասխանատվության չի ենթարկվում: «Մի՞թե մահմեդականները պետք է պատժվեն հայերի սպանության համար, - ինձ ասաց մի քուրդ էլուզակ, որն, ի դեպ, համիդիեի սպա էր, - դա անհնար է»: Իրոք որ, մի՞թե հնարավոր է: Մահմեդական ուղեղին միանգամայն հասկանալի ու բնական է թվում (թերևս այն պատճառով, որ դա սովորական երևույթ է), որ սպանվածների հարազատները խիստ պատժի են ենթարկվում, երբ բողոքում են նրանց դեմ, ովքեր իրենց այրիացրել են ու որբացրել:

1893 թվականի օգոստոսին Ջիբրանի քրդերը հարձակվում և թալանում են Քաղկիկ գյուղը՝ վիրավորելով Հովհաննես անունով մի վաճառականի, որն իր գործով էր զբաղված կրպակում: Հաջորդ օրը Հովհաննեսը խնուսաբերդում ներկայանում է փոխնահանգապետին (կայմակամին) և բողոքում, իսկ վերջինս նրան բանտ է նետում՝ մեղադրելով ստախոսության մեջ: Այն չարչարանքները, որոնց նա ենթարկվում է տենդախտի այդ օջախում, վեր են ամեն մի երևակայությունից, բայց դա արդեն ուրիշ պատմություն է: Ութ օր անց նրա հարևանները կայմակամի մոտ են բերում մի քրդի. վերջինս հաստատում է նրանց այն հայտարարությունը, որ Հովհաննեսն իրոք վիրավորվել է ու չի ստում: Եվ միայն այդ ժամանակ են եկածներին թույլ տալիս միասին 10 ֆունտ կաշառք վճարել՝ վիրավոր Հովհաննեսին ազատելու համար:

Կոդաբազի (գյուղ՝ Բասենում) բնակիչներն ինձ մի քանի սարսափելի պատմություններ են արել այն մասին, թե ինչեր են կրել քրդերի ձեռքից, որոնք նրանցից խլել տարել են 23 եզ, 28 ձի, 60 կով և 20 ոչխար: Պատմություններից մեկը, որը նկարագրում է թուրքական արդարադատության եղանակները, ընթերցողին պատկերացում կտա այդ բոլոր եղելությունների մասին: «Անցած մայիսին (1894 թ.) համիդիեի 12 հեծյալներ հարձակվեցին մեր գյուղի վրա և բռնեցին տեր Դավիթ քահանային: Նրանք խոստացան ազատել քահանային, եթե վերջինս վճարեր 6 ֆունտ: Նա պարտք արեց այդ գումարը, տվեց քրդերին և ազատվեց. ընդ որում, զինվորները կրակում էին գյուղի մյուս բնակիչների վրա, որոնք փախան: Հաջորդ օրը Գիլ բեկը մեկնեց Հասանկալա, որպեսզի բողոքի իշխանություններին: Այնտեղ նա անարգանքի ենթարկվեց, նրան ստախոս անվանեցին և ձերբակալեցին: Քառասուն օր նստելով բանտ կոչված ահավոր որջում, նա թույլտվություն ստացավ 7 ֆունտ վճարել որպես կաշառք և նոր միայն տուն գնալ»:

Մահմեդականներից տուժած քրիստոնյան ոչ մի միջոց չունի արդարադատության հասնելու, և ոչ այն պատճառով, որ դատավորները անհոգ են կամ անգործունյա, այլ որ նրանք գիտակցաբար ձգտում են դրան: Այս կարծիքի ապացույցը, եթե միայն որևէ ապացույց է պահանջվում, այն է, որ բողոքավորներն իրենք են ենթարկվում պատժի այն բանի համար, որ վկայություն են տալիս իրենց նեղացողների դեմ: Բայց եթե քուրդը կամ թուրքն է հանցագործության կամ, թեկուզ, դժբախտ պատահարի զոհ դառնում, ապա կառավարական պաշտոնյաների ե-

ռանդը սահման չի ճանաչում: Անցյալ տարվա գարնանը, երբ ձնհալն սկսել էր և գետերում ու վտակներում ջուրը բարձրացել, մի քանի չքավոր քրդեր խուսնաքարի մոտակայքում անցնելիս են լինում գետի ափով: Խեղճերը, որ ողորմություն էին մուրում և մաքառում կարիքի դեմ, ծանծաղուտով գետն անցնելու փորձ անելիս քշվել էին հոսանքով և խեղդվել: Ամմիջապես գյուղացիների դեմ գործ էր հարուցվել քրդերի սպանության մեղադրանքով, և չորս հայ ավագներ ձերբակալվել ու բանտ էին նետվել Հասանկալայում. ընդ որում, ոստիկանները բնավ չէին թաքցրել այդ անարդար մեղադրանքի նպատակը: Յոթ, թե ութ ամիս անց հայերի առջև պայման են դնում՝ ձերբակալվածները ազատ կարձակվեն 75 ֆունտ կաշառքի դիմաց: Այդ գումարը հավաքվում է դեսից-դենից և վճարվում ղեկավարությանը, որից հետո բանտարկյալներն ազատ են արձակվում: Ես ինքս տեսել եմ նրանցից երկուսին՝ Ադամին և Դոնոյին:

Հայերից հավաքվող հարկերը չափազանց մեծ են. կաշառքները, որոնցով միշտ ուղեկցվում է հարկազանձումը, ամենազազրելի ձևերով վերցնում են զափթիեները, և դրանք կարող են հասնել աներևակայելի չափերի: Ինչ վերաբերում է հարկերի գանձման եղանակներին, ապա դրանք ինքնին բավարար հիմք են Հայաստանում օսմանյան տիրապետությունը ոչնչացնելու համար:

Քաղաքներում քրիստոնյաների ու մահմեդականների հարկման չափերի տարբերության բնորոշ օրինակ բերելու համար բավական է ասել, որ էրզրումի 8000 մահմեդական տնտեսությունները վճարում են 395000 դուռուշ, մինչդեռ քրիստոնյաները, որոնց տնտեսությունների թիվը հաշվվում է սոսկ 2000, մուծում են 430000 դուռուշ:

Գյուղական շրջաններում ամեն ինչի վրա, առանց բացառության, կառավարությունը անչափ բարձր հարկեր է սահմանել, սակայն ամենածանր հարկը, որ գանձվում է օրինական հիմունքներով, ավելի թեթև է, քան զափթիեների շորթումները: Ենթադրենք, օրինակ, ընտանիքը պետք է վճարի 5 ֆունտ, որը և պարտաճանաչ մուծում է: Բայց զափթիեները պահանջում են ևս 3-4 ֆունտ: Եթե նրանց կտրուկ մերժում են, սկսվում են բանակցությունները, որոնք ընթանում են սուր ու վիրավորական արտահայտություններով: Վերջապես համաձայնում են վճարել 1 ֆունտ: Բայց զափթիեները չեն կարող հանգստանալ. մեկ շաբաթ անց նրանք վերադառնում են ու կրկին պահանջում նույն գումարը: Հայերը համբերությունից դուրս են գալիս, բողոքում են և ցույց տալիս ստացականը,

բայց գավաթի մասին ուսումնասիրված չէ, թե մեր վայրագի վրան-տաթուղթը ստացական չէ, այլ թուրքական ինչ-որ գրքից մի քանի տող: Գյուղացիք վկայակոչում են իրենց աղքատությունը և գթություն աղերսում: Ազահությունը, այլ ոչ թե կարեկցանքն է գավաթի ենթին դրդում համաձայնել երեք ֆունտի, բայց այդ դրամն էլ, պարզվում է, դեռ չկա: Այն-ժամ գավաթի ենթինը պահանջում են ընտանիքի ջահել կանանց ու աղջիկներին՝ իրենց ցանկասիրությունը բավարարելու համար: Մերժման հետևանքը դժբախտների այն պատիժներն են, որոնց նկարագրությունից մարդ ստիպված է խուսափել հանուն պատշաճության և մարդասիրական զգացումների: Առևանգումն ու անարգանքը, որոնք կարող են ծագել միայն արևելյան այլասերվածների հիվանդ ուղեղում և անհասկանալի են սովորական եվրոպացուն, իսկ երբեմն էլ՝ նույնիսկ սպանություններն են եզրափակում միջադեպը:

Ես տեսել եմ Բարձր Դռան ներկայացուցիչների զոհերին և խոսել հետները. ես զննել եմ նրանց վերքերը, հարցուփորձ արել նրանց ընտանիքներին, դիմել եմ նրանց քահանաներին, նրանց հալածողներին ու բանտապահներին (ոմանք բանտ են նետված միայն բողոքելու համար) և առանց տատանվելու պնդում եմ, որ նման սարսափները ոչ միայն իրական փաստեր են, այլև հաճախակի տեղի ունեցող երևույթներ: Ներքոհիշյալը թարգմանությունն է մի վավերական փաստաթղթի, որը գտնվում է իմ ձեռքին: Այս փաստաթուղթը Մելիկանի (Քըղիի գավառակ) բնակիչների ստորագրությամբ ու կնիքով ընթացիկ տարվա մարտի 26-ին ուղարկվել է նորին սրբազնություն, էրզրումի խորիմաց առաջնորդ արքեպիսկոպոսին, որը ինչպես բարեկամների, այնպես էլ թշնամիների հարգանքն է վայելում:

«Սրանից շատ ժամանակ առաջ, 4-5 գավաթի ենթին, որոնց հանձնարարված էր հավաքել պետական հարկերը, մեր գյուղն էին ընտրել որպես զլխավոր կայանատեղ և հարակից վայրերի բնակիչներին ստիպում էին ներկայանալ այստեղ՝ վճարելու հարկերը: Չգավաթի ենթինը ուտում-խմում էին և իրենց ձիերին կերակրում մեր հաշվին՝ չթաքցնելով, որ որոշել են մեզ հասցնել աղքատության դուռը:

Վերջերս ուրիշ 7 գավաթի ենթին, որոնք ձևական պատրվակ իսկ չունեին հարկեր հավաքելու, եկան մեր գյուղը, ծեծեցին բնակիչներին, անարգեցին քրիստոնեական կրոնը և անպատվեցին մեր կանանց ու աղջիկներին: Ապա բռնեցին երեք հոգու, որոնք բողոքել էին՝ Պողոսին,

Մարտիկին և Գրիգորին, կրկնակի շրթայով կապեցին ու զլխավայր կախեցին չորսուկից: Այդ վիճակում դժբախտներին թողեցին այնքան, մինչև որ քթերից արյուն հոսեց: Այդպիսի կտտանքից հետո երեքն էլ հիվանդացան: Մինչդեռ գավաթի ենթինը հրապարակավ հայտարարեցին, որ իրենց գործողություններում ղեկավարվել են միայն ոստիկանապետի հատուկ հրամանով:

Նկատի ունենալով շարադրվածը՝ դիմում ենք արդարադատությանը, որպեսզի նա մեզ փրկի այս անտանելի վիճակից: Քըղիի Մելիկան գյուղի բնակիչներ»:

Ստորագրված է՝ Քատգերե, 26 մարտի 1895 թ.:

Ահա նույն գավառակի մի այլ գյուղից մեկ այլ խնդրագիր՝ նույնպես հղված էրզրումի արքեպիսկոպոսին.

«Մի քանի գավաթի ենթին հարկահավաքման պատրվակով եկան մեր գյուղը Թուրքիայի ժամանակով ժամը 5-ին, ջարդեցին մեր տների դռները, ներխուժեցին ննջասենյակները, բռնեցին մեր կիսամերկ կանանց ու երեխաներին և անկողիններով նետեցին փողոց: Ապա դաժանորեն ծեծեցին ու անգթորեն վարվեցին նրանց հետ: Վերջապես, ընտրելով 30-ից ավելի կանանց՝ փակեցին մարագում և նրանց նկատմամբ կատարեցին իրենց հանցավոր ցանկությունը: Հեռանալուց առաջ, իրենց սովորության համաձայն, խլեցին տարան մեր ամբողջ ուտելիքն ու անասնակերը: Խնդրում ենք ձեր ուշադրությունը դարձնել այս փաստերի վրա և աղերսում կայսերական ողորմածություն: Քըղիի գավառակի Արեգ գյուղի բնակիչներ»:

Ստորագրված է՝ Մուրադյան, Ռեսյան, Բերգովյան, Մելքոնյան: 26 մարտի 1895 թ.:

Ես ինքս մի հայ շինականի տանն էի Քյոփրի-Քյոյ գյուղում, երբ այնտեղ եկավ հեծյալ գավաթի ենթին խումբը: Նրանք տանտերերին դուրս կանչեցին և կոպտորեն պահանջեցին, որ ուտելիք, քնելու տեղ տան և կերակրեն ձիերին: Չգիտեմ, թե ուրիշ էլ ինչ կպահանջեին, բայց ես հյուրընկալողիս նեղ վիճակից փրկեցի՝ ասելով, թե մի գիշերով նրա ամբողջ շենքը վարձել եմ: Չարմանալի չէ, որ խնուսի գավառակի շինականները իրենց խնդրագրում, որն աղերսում էին ներկայացնել «ազնվական և մարդասեր անզլիական ժողովրդին», բողոքում են, որ երբեմնի բարգավաճ և բերքառատ երկիրն այժմ ամայացած է, քայքայված ու լքված:

Ահա թե ինչպիսին էին այն սարսափները, որոնց մասին որոշ լուսա-

վորյալ անգլիացիներ խոսում են հետևյալ թեթևամիտ արտահայտությու-
նուններով. «Այդ հայերն ու քրդերը մշտապես վիճում են և, անշուշտ, սո-
վորական իրավիճակներում այդ երկրում անտարբեր են մեծ կամ փոքր
արյունահեղության նկատմամբ»:

Այս դիտարկումը արդարացի է այն իմաստով, որ ոչխարներն ու
գայլերը մշտապես կռվի մեջ են. բայց դրանով էլ սահմանափակվում է
բերված խոսքերի արդարացիությունը: Հայերն ի բնե խաղաղասեր են,
գյուղական շրջաններում նրանք եռանդագին նվիրված են հողագոր-
ծությանը, իսկ քաղաքներում ամբողջովին կլանված են առևտրով: Բայց,
որպեսզի արյունահեղության հանդեպ նրանց բնածին խորշանքը տեղի
չտա ինքնապաշտպանության բնազդին, իրենց հարազատ ու թանկ եակ-
ների հետ խոր կապվածությանն ու պարտքի զգացումին, նրանց արգել-
ված է զենք ունենալ, և այն տանջանքները, որոնց ենթարկվում են այդ օ-
րենքը խախտողները, ամոթից կշիկացնեին Կոնֆուցիուսի հայրենակցի
այտերը*: Հայերը պետք է ապավինեն միայն թուրք զինվորների ու թուր-
քական օրենքի պաշտպանությանը:

Կայսերական զորքերի կողմից ցուցաբերվող պաշտպանության
բնույթը բավականաչափ դրսևորվեց անցած օգոստոսին և սեպտեմբե-
րին Սասունի գավառում, Ֆարֆրքարի սարալանջներին և Անդոկի բար-
ձունքներում, Տավրոսի գյուղերում և Գելիեզուզանի դաշտում: Օթան-
ջար, Համզաշեյք, Կակառուբ, Կարագյոլ գյուղերը, որոնք 1890-91 թթ.
բարզավաճ և բարեկեցիկ էին, 1894 թ. ոչխար, գոմեշ կամ ձի բացարձա-
կապես չունեին: Փարախներն ու ախոռները դատարկ էին, իսկ հացահա-
տիկի 70 հսկայական դեզերի մոխիրը լրացնում էր այդ տխուր պատ-
մությունը: Դա քրդերի ձեռքի գործն էր, որոնց բարեկամները՝ թուրք զին-
վորները, թվով 200 հեծյալ, տեղավորված էին Յոնջալիում՝ Օթանջարից
կես ժամվա հեռավորությամբ, նույնքան էլ Կոպում և 100 մարդ էլ՝ Շեքա-
զուրում: Չորքերն իրոք որ պաշտպանել էին, բայց միայն քրդերին, և որ-
պես վարձատրություն ստացել ավարի մի մասը:

Թուրքական օրենքով նախատեսված պաշտպանությունը նույնպի-
սի բնույթ է կրում, բայց անհամեմատ ավելի կործանարար է այն հայերի

* Այդ առումով երջանիկ բացառություն էր Լացիգ լճի մոտ գտնվող Պոխոսի (Ախլաթի
գավառակ) ունևոր բնակիչներից մեկը: Ճիշտ է, նա հրացան չունեց, բայց կասկածել
էին, թե թաքցնում է: Նրա տունը խուզարկել էին, հատակը քանդել, զննել ձեղնահար-
կը, բայց՝ ապարդյուն: Այնժամ նրան ձերբակալել էին մեկ ամսով և թույլ տվել 70 ֆուն-
տով գնելու իր ազատությունը: Ընդամին, նա ստորագրություն էր տվել, որ երբեք ոչ մի
հրազեն չի ունեցել:

համար, որոնք ստիպված են լինում դիմել իշխանություններին: Բազում
ականատեսների երկու-երեք վկայություններն անգամ բավական են
հայկական գավառներում թուրքական արդարադատության արտառոց
ձևերը բացահայտելու համար:

Մանկասար գյուղի (Ալաշկերտի սանջակ) բնակիչ Գևորգ Վարդան-
յանն, ի դեպ, հետևյալ ցուցմունքն է տվել.

«1892 թվականին Անտոն անունով մի քուրդ՝ Քերևաշի որդին (ճա-
լալ ցեղից), իր ընկերների հետ հայտնվեց մեր տանը և վերցրեց 5
ֆունտ՝ ոսկով, որը պահել էի սերմացու գնելու համար: Նրա դեմ գան-
գատ գրեցի, բայց իշխանությունը արհամարհանքով մերժեց: Իմանա-
լով, որ փորձել են իրեն պատասխանատվության կանչել, Անտոնը մի գի-
շեր հայտնվեց 12 մարդկանցով, բարձրացավ կտուրը և կրակեց երդի-
կից: Գնդակը դիպավ հարսիս՝ եզեկոյին, որը տեղնուտեղը մահացավ:
Սպանվեցին նաև նրա երկու տղաներն ու իմ երկու տարեկան Միսաքը:
Հետո քրդերը մտան տուն ու տարան կահկարասին, հագուստեղենը, 4
եզ և 4 կով*: Շտապեցի Ղարաքիլիսա գյուղ և բողոքեցի Ռահիմ փաշա-
յին: Լսելով ինձ, նա ասաց. «Քուրդ համիդիները սուլթանի ծառաներն
են: Այդպես վարվելը նրանց իրավունքն է: Դուք՝ հայերդ, խաբեբաներ
եք»: Մեզ ձերբակալեցին և բաց թողեցին միայն այն ժամանակ, երբ վճա-
րեցինք 2 ֆունտ՝ ոսկով:

Հաջորդ ձմռանը մեր գյուղ եկան 200 զինվորներ հենց իր՝ Ռահիմ
փաշայի առաջնորդությամբ: Նա մեզ անմիջապես հայտարարեց, թե
քրդերի գործողություններից գանգատվելը անօրինական է: Հետո իր
զինվորներով տեղավորվեց մեզ մոտ և պահանջեց, որ բացի ձվից, հա-
վուճվից և յուղից, օրական տանք նաև 8 ոչխար, 10 չափ գարի: Մեր գյու-
ղի բնակիչները 40 օր շարունակ այդ մթերքը բերում էին անհատույց՝ որ-
պես վարձ ստանալով հայիոյանքներ ու հարվածներ. Ռահիմ փաշան
զայրանալով իր տանտիրոջ՝ Փերի վրա, այն բանի համար, որ նա
փնթփնթում էր, կարգադրեց շիկացնել պղնձե ամանը և դնել Փերի
գլխին: Հետո լրիվ մերկացրեց և սկսեց ունելիով մսի կտորներ պոկել
նրա դողացող ձեռքերից:

Ավագակները նոր էին հեռացել գյուղից, երբ նրանց տեղը գրավեց
Աինե փաշան՝ իր 60 հեծյալներով: Տեսնելով, որ այլևս ոչխար չի մնացել,

* Կովերը, ձիերն ու մյուս անասունները հաճախ գտնվում են նույն հարկի տակ, որտեղ
ապրում են նաև տանտերերը: Ես անհանգիստ շատ գիշերներ եմ անցկացրել ձիերի,
գոմեշների, եզների, ոչխարների և այծերի հետ միասին մի մեծ սենյակում:

նրանք մորթում և ուտում էին մեր կովերն ու եզները, և 6 օր շարունակ շատ տառապանքներ պատճառելուց հետո միայն գնացին: Ու՞մ կարող էինք բողոքել, երբ մեր աչքի առաջ օրինական իշխանություններն իրենք էին նույնպիսի բաներ անում: Մնում էր միայն հեռանալ երկրից, ինչն էլ մենք արեցինք»:

Ահա մի ուրիշ դեպք, որի գոհն էր եղել հայ բողոքական քարոզչի կինը՝ տիկին Սուքիասյանը Թողովերան գյուղից (Բասենի գավառակ): Ես անծանոթ ծանոթ եմ այդ ընտանիքին և ունեմ բոլոր անդամների լուսանկարները, այդ թվում՝ տիկնոջ, որը հետո սպանվել է: «1894 թ. սեպտեմբերի 12-ին, - հաղորդել է սպանվածի որդին՝ Արմենակ Սուքիասյանը, - հորս տանը նստած էինք սեղանի շուրջ, երբ հանկարծ ներս վազեց մի տղա և ասաց, որ եկել են թուրքեր ու քրդեր, հարձակվելու քրիստոնյաներիս վրա*:

Եղբայրս անցավ փողոցի մյուս կողմը, որտեղ գտնվում էր իր կրպակը՝ ատրճանակը վերցնելու: Մինչ այդ, 16 քուրդ հեծյալներ մտան փողոց, բարձրացան տանիքների վրա և սկսեցին կրակել: Մենք պատնեշեցինք դուռը, բայց նրանք այն ջարդեցին: Գնդակը դիպավ մորս վզին ու, բարեբախտաբար, լրջորեն չվնասեց: Նա գտնվում էր տանիքին և պաշտպանվում քարեր նետելով: Այդ ժամանակ մահմեդականներից մեկը բարձրացրեց հրացանը, նշան բռնեց ու կրակեց: Գնդակը կպավ այտին և դուրս եկավ ականջի տակով, պոկելով դեմքի մի մասը: Նա ընկավ, մենք նրան ներս տարանք և ջուր տվեցինք, որը ստիպված էինք բերանը լցնել՝ բարձրացնելով վերին ծնոտը: Հաջորդ առավոտ նա մահացավ: Մենք բողոքեցինք, բայց ոչ ոք չպատժվեց»:

Եվս մի բնորոշ օրինակ, և ես կվերջացնեմ նյութի այս մասը: Այն դեպքը, որի մասին այժմ մտադիր եմ պատմել, քաղված է ոչ միայն շահագրգիռ կողմերի հաղորդումներից, այլև՝ պաշտոնական հաշվետվություններից, որոնք ստորագրված ու կնքված են կառավարական պաշտոնյաների կողմից և որոնք ես ինքս եմ տեսել: Այն ամենապերճախոս վկայությունից էլ լավ է լուսաբանում թուրքական արդարադատության դրվածքը և շատ օգտակար դաս է նրանց համար, ովքեր մինչև օրս ազնվորեն հավատում են թուրքերի խոստումներին:

1890 թ. հունիսին Ալիճագրակ գյուղը կրկնակի հանցագործության ասպարեզ էր դարձել: Հայ հովիվները, որոնք արածեցնում էին գյուղի

* Այս պատմությունը ես կրճատել եմ:

նախիրը, սաստիկ հուզված վազում գալիս են օգնություն խնդրելու. «Իբիլ Օղլու Իբրահիմի քրդերը եկել են իրենց ոչխարներով և, - ասում են նրանք, - մեզ քշել գյուղի արոտավայրերից»: Դա Հայաստանի գյուղական կյանքի սովորական երևույթներից է: Չորս երիտասարդներ գնում են բանակցելու մահմեդականների հետ և հայտարարելու սեփականության իրենց իրավունքի մասին: Երբ տեղ են հասնում, քրդերը կրակ են բացում և տեղնուտեղը սպանում պատանիներից մեկին, որի անունը հոմեթի էր: Մյուսը մահացու վիրավորվում է. նրա անունը Հարություն էր: Մյուսները սարսափահար փախչում են: Գյուղացիները վախեցած թողնում են աշխատանքը, քահանան և գյուղի մի քանի հեղինակավոր ներկայացուցիչներ շտապում են սպանության վայրը, մյուսներն էլ գնում են զգուշացնելու ժանդարմներին:

Իրոք, որ զափթիեները (ժանդարմները) չհապաղեցին ներկայանալ՝ մի պաշտոնյայի ուղեկցությամբ: Նրանք հոմեթիին գտան մեռած, իսկ գյուղի քահանա տեր հոմեթիին՝ մահացող Հարությունի վրա հրաժեշտի աղոթք կարդալիս: Նրանք դադարեցրին աղոթքը և սպառնալից հարցրին. «Քրդերը որտե՞ղ են սպանություն կատարել»:- «Նրանք բացնըվեցին», - եղավ պատասխանը:- «Կա-չկա, շներ, դուք սպանել եք նրանց և թաղել աչքից հեռու, ես բոլորիդ, նաև քեզ, - մատնացույց անելով քահանային, - կծերբակալեմ»: Եվ նրանց բոլորին տարան Հասանկալա, որտեղ նետեցին մի գարշելի գնդան, իսկ որոշ ժամանակ անց՝ տեղափոխեցին Էրզրումի բանտ:

Տեր հոմեթիինը ունևոր մարդ էր: Հետևողականորեն սնանկացնելու ծրագիրը այն ժամանակ նոր էր սկսում իրականացվել: Նրա եղբայրը՝ Կարապետը և բախտակից 10 ընկերները նույնպես ունևորներ էին, ահա թե ինչու իշխանություններին ցանկալի էր նրանց ունեցվածքը հանձնել ուրիշի ձեռքը: Դրա համար էլ հայերին պահեցին զարշահոտ բանտում: Ժամանակը դանդաղ էր անցնում: Օրը օրի ետևից, շաբաթը՝ շաբաթի, ամիսը՝ ամսի, այնպես որ, թվում էր, թե արգելափակվածներին բոլորովին մոռացել են: Նրանց ընտանիքները մշտապես ահ ու սարսափի մեջ էին, տնտեսությունը՝ լիովին բարձիթողի, առողջությունը վերջնականապես քայքայված: Այդ դժոխային պայմաններում նրանք անցկացրին մեկ տարի՝ ամենասոսկալին իրենց կյանքում:

Ի վերջո, նրանք սկսեցին ամենահարգալից ձևով դիմել հալածողներին, որպեսզի վերջիններս օգնեն և ազատվելու, և խնդրեցին նշանակել

գինը: Պայմաններ սահմանվեցին, և նրանց խորհուրդ տրվեց քրդերին ուղարկել որոնելու այն մարդասպաններին, որոնց «սպանության» մեջ մեղադրվել էին հայերը. «Եթե նրանց գտնեն, դուք կազատվեք»: Այդ խորհրդի գինը և դրա իրականացման ծախսերը հասան գրեթե 400 ֆունտ ստեռլինգի, որը հանգանակվեց հայերի 40 տոկոսի կողմից:

Որոնումներն, անշուշտ, հաջողությամբ պսակվեցին, որովհետև քրիստոնյաներին սպանող քրդերն ու թուրքերը կարիք չուներն թաքնվելու և վհատվելու: Այն ամենը, ինչ որ նրանք կանեն՝ լավ է: Այս պատմության հերոսները եղել էին սուլթանի սիրելի հեծելազորային գումարտակներից մեկի՝ Ալաշկերտի գավառակի համիդիեի զինվորները: Նրանք խոստովանեցին իրենց հանցագործությունը, և վկաների մի ամբողջ բազմություն, անշուշտ թուրքեր և քրդեր, քանի որ քրիստոնյաների վկայությունը չի ընդունվում, դատարանում ցուցմունք տվեց 12 հայ կալանավորների օգտին, որոնցից 9-ը, սնանկացած և քայքայված առողջությամբ, ազատվեցին: Դատավճռով հաստատվում էր հայերի անմեղությունը, քանի որ մարդասպան քրդերը ողջ ու առողջ հայտնաբերվել էին համիդիե զորքերում ուղղահավատ մահմեդականների վեհապետի ծառայության մեջ:

Հանցագործները, որոնց թանկագին կյանքի պատճառով այդքան աղմուկ էր բարձրացել, անպատիժ մնացին և մինչև օրս էլ շարունակում են նույն ջանադրությամբ ծառայել նորին մեծություն սուլթանին՝ առաջվա պես արհամարհելով վտանգավոր հետևանքները:

Շուրը կհաչի, եթե նրա ներկայությամբ գնդակահարեն մի ուրիշ շան: Մինչդեռ, այդ հայերը նույնիսկ չէին էլ բողոքել. նրանք պարզապես հանցանքի վայր էին հրավիրել օրենքի և արդարադատության ներկայացուցիչներին, իսկ վերջիններս նրանց հետ վարվել էին իբրև մարդասպանների: Հայաստանում քրիստոնյաները չեն համարձակվում ակնկալել այնպիսի վերաբերմունք, ինչպիսին ցուցաբերում են լավ տերերը՝ շներին:

IV

Ընդհանրապես համիդիեի քուրդ սպաների և մասնավորապես Մոստիզո սպայի մասին պատմություններից մեկը այն աստիճան անհավատալի թվաց ինձ, որ որոշեցի ստուգել իսկությունը: Իմանալով, որ սատանայի այդ եղբայրը ձերբակալվել և որպես վտանգավոր հանցագործ պահվում է Էրզրումի բանտում, որտեղ նրան ամենայն հավանականությամբ

յամբ կախաղան էր սպասվում, մտադրվեցի հնարավորության դեպքում տեսակցել և ճշմարտությունն իմանալ անձամբ իրենից: Առաջին փորձը անհաջողությամբ ավարտվեց: Անուղղելի հանցագործը գտնվում էր հատուկ հսկողության ներքո, և եթե ի կատար ածեի իմ նախնական մտադրուհուն՝ նրան այցելելի հագուստս փոխած, կենդանի չէի մնա: Երեք շաբաթվա փորձերից հետո, վերջապես հաջողվեց քսակի օգնությամբ հանոգել բանտապետին: Այնուհետև բանակցությունների մեջ մտա հենց ելուզակի հետ, և ջանքերիս շնորհիվ Մոստիզոն թույլտվություն ստացավ գիշերը գաղտնի դուրս գալ բանտից ու հինգ ժամ անցկացնել իմ սենյակում, պայմանով, որ հետո պետք է վերադառնար իր զնդանը:

Երբ եկավ նշանակված օրը, բանտապետը պայմանը կատարելուց հրաժարվեց՝ պատճառաբանելով, որ Մոստիզոյի ճակատագիրն արդեն վճռված է, և նա փախուստի կոչմի հենց որ դուրս գա բանտի սահմաններից: Հետագա մի քանի բանակցություններից հետո, սակայն, համաձայնվեցի նրա փոխարեն երկու պատանդ թողնել, այդ թվում՝ մեկ քրդի, որին ելուզակը չէր վտանգի նույնիսկ հանուն կյանքի: Վերջապես, գիշերով նա ինձ մոտ եկավ տանիքների վրայով, ոստիկաններից աննկատ, որոնք մշտապես հսկում էին բնակարանս:

Մոստիզոն ամբողջ գիշերն անցկացրեց ինձ մոտ, և ես նրան ներկայացրի երկու պատվարժան եվրոպացիների. բացի այդ, որպեսզի իմ հարցազրույցը ոչ մի կասկած չառաջացներ, առավոտյան լուսանկարվեցի հետը:

Այդ քրդի պատասխանները ճշմարտացիորեն բացահայտում են Հայաստանում թուրքական վարչակարգի ողջ քաղաքականությունը: Նպատակահարմար չգտնելով զրույցը ներկայացնել ամբողջությամբ, մեկերկու հակիրճ մեջբերումներ կանեն:

Ֆարց. Մոստիզո, կցանկանայի, որ անձամբ պատմեիք ձեր զարմանալի արարքների մասին, և գրի առնեի եվրոպացիներին հաղորդելու համար:

Պատասխան. Այո՛, այո՛: Դրանց մասին հաղորդեք 12 տերություններին (այսինքն՝ ամբողջ աշխարհին):

Հասկանալի է, Մոստիզոն չէր կարող մտածել բարոյական հետևանքների մասին կամ վախենալ դատական պատժից: Եվ, այդուհանդերձ, հատուցման փաստը ակնհայտ էր՝ Մոստիզոն դատապարտված էր մահվան: Ցանկանալով պարզել այդ հանգամանքը, շարունակեցի:

- Ինձ համար շատ ցավալի է ձեզ տեսնել բանտում: Դուք վաղուց եք կալանքի տակ:

Պատասխան. Ինձ համար էլ է շատ ցավալի: Հինգ ամիս է, բայց այդ ժամանակը հավերժություն է թվում:

Հարց. Կարծում եմ, դրանում հայերն են մեղավոր...

Պատասխան. Այո:

Հարց. Ինձ պատմել են, որ դուք կոտորել եք հսկայական թվով հայերի, խլում տանում էիք կանանց, հրկիզում գյուղերը և ընդհանրապես, դաժանորեն էիք նրանց հախից գալիս:

Պատասխան. Դա բացարձակապես չի առնչվում իմ բանտարկությանը (արհամարհանքով): Ես չէի պատժվի հայերին թալանելու համար: Մենք բոլորս ենք այդպես անում: Ես հազվադեպ էի սպանում նրանց, բացառությամբ այն դեպքերի, երբ դիմադրում էին: Բայց հայերը մատնեցին, և ես բռնվեցի: Ահա թե ինչը նկատի ունեն: Եթե ինձ կախեն, ապա դա կլինի թուրքական պահակակետի վրա հարձակվելու և թալանելու, ինչպես նաև այն թուրք զնդապետի կնոջը բռնաբարելու համար, որը (զնդապետը) այժմ էրզրումում է: Բայց ոչ ամենևին հայերի համար: Նրանք ի՞նչ են, որ նրանց պատճառով տուժեի:

Պատմելով իր մի քանի արկածների մասին, որոնց ժամանակ բռնաբարել էր քրիստոնյա կանանց, սպանել հայ շինականների, կողոպտել պահակակետն ու փախել բանտից, նա ասաց.

- Դրանից հետո մենք մեծ գործեր արեցինք, այնպիսի գործեր, որոնք կզարմացնեին 12 տերություններին: Մենք հարձակվում էինք գյուղերի վրա, սպանում նրանց, ուժեր կարող էին մեզ սպանել, թալանում էինք տները, հափշտակում փողերը, վերձակները, ոչխարներն ու կանանց, հարձակվում էինք ճամփորդների վրա... Խիզախ ու մեծ էին մեր գործերը, մարդիկ շատ էին խոսում դրանց մասին:

Լսելով «մեծ գործերի» մասին նրա պատմածը, որոնցից մի քանիսը 50 մարդու կյանք էր արժեցել, հարցրի.

- Ձեզ երբևէ հայերը դիմադրություն ցույց տալի՞ս էին, երբ խլում տանում էիք նրանց անասուններն ու կանանց:

Պատասխան. Ոչ հաճախ: Նրանք չէին կարող, որովհետև զենք չուներն և լավ գիտեն, որ եթե սպանեին մերոնցից մի քանիսին, ապա կգային ուրիշ քողեր և վրեժ կլուծեին, այնպես որ՝ հայերը ոչինչ չէին շահի: Իսկ երբ մենք ենք նրանց սպանում, ոչ ոք դրանից չի վրդովվում: Թուր-

քերը հայերին ատում են, իսկ մենք՝ ոչ: Մեզ հարկավոր են միայն փողն ու ավարը. իսկ քողերից ոմանք ուզում են զավթել նաև նրանց հողերը: Մինչդեռ թուրքերը ծարավի են նրանց արյան: Սրանից մի քանի ամիս առաջ ես հարձակվեցի Կարա Զլիրիու հայկական գյուղի վրա և քչեցի տարա բոլոր ոչխարները: Մի հատ անգամ չթողեցի: Բնակիչներն հուսահատությունից սկսեցին հետապնդել մեզ և մի քանի անգամ կրակեցին, բայց վնաս չպատճառեցին: Ոչխարները քչեցինք էրզրում՝ վաճառելու: Բայց ճանապարհին ընդհարվեցինք հայերի հետ Շեն գյուղի մոտ: Գյուղացիները գիտեին, որ մենք տարել ենք իրենց հավատակիցների անասունը, և հարձակվեցին մեզ վրա: Մենք ընդամենը հինգ հոգի էինք, իսկ նրանք շատ էին. ամբողջ գյուղն էր դուրս թափվել մեր դեմ: Իմ մարդկանցից երկու ռայաներ*, սպանվեցին: Հայերին հաջողվեց ետ խլել 40 ոչխար, մնացածը վաճառեցինք էրզրումում:

Հարց. Դուք ընդհանրապես շա՞տ եք հայ սպանել:

Պատասխան. Այո, բայց մեզ ավարն է պետք և ոչ թե նրանց կյանքը, որից ոչ մի օգուտ չուներ: Բայց ստիպված ենք լինում դիմել զնդակին, որ զսպենք նրանց, երբ դիմադրում են:

Հարց. Դուք հաճախ էիք օգտագործում ձեր խանչալները:

Պատասխան. Ոչ, մեծ մասամբ օգտվում էինք հրացաններից: Պիտի մեր գոյությունը պահպանենք: Այնպես այնքան հաց ու փող ենք հայթայթում, որքան մեզ հարկավոր է ծմռանը: Անասուններ շատ ունենք, բայց դրանց հոգսը մենք չենք քաշում, տալիս ենք հայերին, որ խնամեն ու կերակրեն:

Հարց. Իսկ եթե հրաժարվում են...

Պատասխան. Այդ դեպքում հրկիզում ենք նրանց խոտը, հացն ու տները և քշում տանում նրանց ոչխարները. դրա համար էլ նրանք չեն հրաժարվում: Գարնանը մեր անասունները ետ ենք վերցնում. ընդ որում՝ հայերը մեզ պետք է վերադարձնեն նույնքան, որքան ստացել են:

Հարց. Ի՞նչ եք անում, երբ ոչխարների քանակը հիվանդության պատճառով նվազում է:

Պատասխան. Դա հայերի խնդիրն է: Նրանք պարտավոր են վերադարձնել այն, ինչ տվել ենք, նույն քանակությամբ. նրանք դա լավ գի-

* Քողերը բաժանվում են թորենների (torens) կամ ազնվածիների, որոնք պատերազմի ժամանակ առաջնորդում են, իսկ խաղաղ ժամանակ հանգստանում, և ռայաների (rayahs), որոնք իրենց կյանքը տալիս են տերերին և նրանցից լիակատար կախման մեջ են: Թորենը կարող է ռայային սպանել նույնքան անպատժելիորեն, ինչպես քրիստոնյային:

տեն: Մենք չենք կարող կորուստներ կրել: Իսկ նրանք ինչու՞ չպետք է պահպանեն այդ ոչխարները, դրանք գրեթե բոլորն էլ նրանցն են եղել...

Լսելով պատմությունները ելուզակների ասպատակությունների, սպանությունների, կողոպուտի և այլնի մասին, դարձյալ նրան հարցրի.

- Դուք, Մոստիգո, կարո՞ղ եք էլի որևէ բան հաղորդել ձեր խիզախ արարքների մասին, որպեսզի տեղեկացնեմ 12 տերություններին:

Եվ նա տվեց հետևյալ բնորոշ պատասխանը.

- Մի անգամ գայլին ասացին՝ պատմիր բզկտածդ ոչխարի մասին: Իսկ նա պատասխանեց՝ հազարավոր ոչխարներ են կերել, դուք նրանցից որի՞ն նկատի ունեք: Նույնը կարելի է ասել իմ գործերի մասին: Եթե ես խոսեի, իսկ դուք երկու օր շարունակ գրեիք, միևնույն է, դեռ շատ բան կմնար չասված:

Այս ավագակը քուրդ է, իսկ քրդերի անունը լեզեոն է: Ex uno disce omnes*: Եվ, այդուհանդերձ, քրդերի հալածանքները ամենամեղմն են: Փողի կարիք ունենալով՝ այս մարդը թալանում էր, զգայական հաճույքները բավարարելու համար անարգում կանանց ու աղջիկներին, պաշտպանելով իր ավարը՝ սպանում տղամարդկանց ու կանանց, և, կատարելով այդ ամենը, նա միանգամայն վստահ էր իր անպատժելիությանը, քանի դեռ նրա զոհերը հայեր էին: Այդ դեպքում ակամա հարց է ծագում՝ ուրեմն, ի՞նչ, այնտեղ օրենք գոյություն չունի: Ընդհակառակը, ունի, և նույնիսկ շատ ավելի լավ օրենքներ, եթե միայն կիրառվեն. բավական էր, որ Մոստիգոն թալաներ կայսերական պահակակետն ու բռնաբարեր թրքուհուն՝ անմիջապես դատապարտվեց մահվան:

Ուստի, օրենքները, բարենորոգումներն ու սահմանադրությունները, թեկուզ դրանք կազմված լինեն ամենախմաստուն և փորձառու օրենսդիրների ու պետական այրերի կողմից, չարժեն նույնիսկ այն թուղթը, որի վրա գրված են, և անօգուտ են, քանի դեռ դրանց կիրառումը վստահված է թուրքերին՝ առանց որևէ վերահսկողության: Ասվածի ապացույցը թուրք պաշտոնյաների կյանքն ու գործունեությունն է վերջին 50 տարվա ուզածդ ժամանակահատվածում:

Ահա, օրինակ, եռանդուն վարչարար, նորին գերազանցություն Յուսեյն փաշայի՝ նորին մեծություն սուլթանի գեներալ-բրիգադիրի աչքի ընկնող սխրանքները: Այս պատմությունը կարող է դիմանալ ամենախիստ ստուգման: Գլխավորելով քուրդ ելուզակների մի հրոսակախումբ,

* Ըստ մեկի՝ դատիր բոլորի մասին:

որը երբեմն հասնում էր մինչև 2000 մարդու, նա մշտապես անհանգըստացնում էր գավառի խաղաղ բնակիչներին՝ թալանելով, տանջելով, բռնաբարելով և սպանելով, այնպես որ, հենց միայն նրա անունը սարսափի էր մատնում բոլորին: Պատնոսի հայերը այնքան էին տառապել սրա անօրինականություններից, որ լքել էին իրենց գյուղն ու վերաբնակվել Ղարաքիլիսայում, որտեղ ապրում էր կայմականը: Այնժամ Յուսեյնը մի մեծ խումբ զինյալներով շրջապատել էր Ղարաքիլիսայի եպիսկոպոսի տունը և նրան ստիպել ժողովրդին ետ վերադարձնել: Նույնիսկ մահմեդականներն այնպես էին վրդովվել նրա արարքներից, որ Պատնոսի քուրդ ուսուցիչը՝ Նարի շեյխը, Յուսեյնի դեմ բողոքել էր երգրումի վալիին (գեներալ-նահանգապետին):

Դրանից հետո Յուսեյնը ուղարկել էր իր մարդկանց, որոնք սպանել էին շեյխ Նարիին և այնպես վախեցրել նրա հարսին, որ սա մահացել էր: Իր արշավանքներից մեկի ժամանակ նա քշել տարել էր 2600 ոչխար, բազմաթիվ ձիեր, կովեր և այլն, հափշտակել 500 ֆունտ, հրկիզել 9 շեն, սպանել 10 մարդ և կտրել 10 հոգու աջը, քիթն ու ականջները: 1890 թ. սկզբներին նա Պատնոսից 5 քրիստոնյա աղջիկ էր փախցրել, իսկ նույն տարվա սեպտեմբերին և հոկտեմբերին այդ նույն գավառակի բնակչությունից 300 ֆունտ ռազմատուգանք էր հավաքել: Նշված հանցագործություններից և ոչ մեկի համար նա չէր պատժվել: 1890 թ. դեկտեմբերին նա եղբորն ուղարկում է, որ էլի փող հավաքի: Այնթափի գավառակի 21 գյուղերի թալանից ստացվում է ևս 350 ֆունտ և 200 կճուճ յուղ (հավասար է 3000 ֆունտ ստեռլինգի): Պատնոսի մի հայ, անունը՝ Խաչո, չի կարողացել կամ չի ցանկացել մուծել պահանջվող գումարը, որի հետևանքով նրա տունը թալանել են, իսկ կնոջն ու երկու երեխաներին սպանել: Այդ ժամանակաընթացքում քաջարի Յուսեյն փաշան զբաղեցնում էր իր պաշտոնը և «կատարում» մուշիի կամ փոխնահանգապետի «պարտականությունները»:

Մի անգամ նա Պատնոսից և Ղզըլկոխից քշում տանում է 1000 ոչխար, 7 լուծ եզ և վաճառում էրգրումում, հետո խլում ղզըլկոխցի մի հայի՝ Մանուկի հրաշք ծին ու նվեր ուղարկում էրգրումի դատավորի որդուն: 1891 թվականի փետրվարի վերջին, մի գիշեր Յուսեյնը, նրա ազգական Ռասուլը և ուրիշներ ներխուժում են հայ Գասպարի տուն, որ տանեն նրա գեղեցկուհի հարսին: Բայց տնեցիները սկսում են օգնություն կանչել: Յուսեյնը հանում է ատրճանակը և սպանում երիտասարդ կնոջը: Երգրու-

մի վալիին ներկայացված խնդրագիրը Յուսեյնին պատասխանատվության ենթարկելու մասին, մերժվում է: Դրանից հետո Յուսեյնը կանչվում է Կոստանդնուպոլիս, սրտագին ընդունելությունից հետո սուլթանից շքանշան ստանում, արժանանում փաշայի կոչման և նշանակվում գեներալ-բրիգադիր: Երբ անցյալ տարի գործեր հայտնվեցին Մուշում և Սասունում, Յուսեյնը կոտորածի հերոսներից մեկն էր, իսկ երբ «կարգուկանոնը» վերահաստատվեց, նա Պատնոս վերադարձավ՝ փախցրած մի քանի սասունցի ջահել աղջիկների հետ: Այժմ նա բարեկեցիկ կյանք է վարում և հարգանք վայելում:

Անկասկած, էլի կլինեն այնպիսի հանձնարարություններ, որոնք միայն կվստահեն Յուսեյն փաշային կամ նրա նմաններին: Բայց մի՞թե կարելի է սրանց թողել քրիստոնյա բնակչության կառավարումը: Եթե ենթադրենք, որ Էրզրումի վալիներն ու երկրամասի մյուս վարչարարները շատ ավելի բարձր բարոյականության տեր մարդիկ էին, այդուհանդերձ, ի՞նչ օգուտ նրանց ազնվությունից և հիանալի մտադրություններից, եթե նրանք Յուսեյնին թույլ էին տալիս թալանել, սնանկացնել, այրել և անպատժելիորեն սպանել: Չնարավո՞ր է, արդյոք, նախատել Յուսեյն փաշային, երբ կատարած արարքների համար նա աչքի էր ընկել և պարգևատրվել օրենքի ու կարգուկանոնի գերագույն պահպանի՝ ուղղահավատ մահմեդականների վեհապետի կողմից: Բոլոր պետերը չէ, որ նորին գերագանցություն Յուսեյն փաշայի ճաշակն ու արիությունն ունեն: Անկասկած, շատ շատերը, անկախ իրենց անձնական հակումներից, ծառայողական պարտքի զգացումից դրդված, այնպիսի պատրվակներ են փնտրում զանցանքների համար, որոնց ոչ մի արդարացում չի կարող լինել: Այն խնդիրները, որ նրանք են կատարում այդ որոնումների ընթացքում, աներևակայելի կթվային, եթե հանրահայտ չլինեին: Չետևյալ դեպքը հետաքննվել և ստուգվել է Թուրքիայում օտարերկրյա ներկայացուցիչների կողմից:

1893 թվականի գարնանը Մուշի նահանգապետ Ղասիբ փաշան, ջանալով որևէ ապացույց գտնել Ավզուտի (Auzoot) և հարավային գյուղերի հայերի անբարյացակամության մասին, այնտեղ է ուղարկում ոստիկանության կապիտան Ռեշիդ էֆենդիին, որպեսզի սա խուզարկի և զենք հայտնաբերի: Ռեշիդը մեկնում է, մանրակրկիտ հետազոտում, տներում, տանիքներում և գետնի տակ ջանադրաբար որոնում, բայց՝ ապարդյուն: Ոչ մի տեղ հրազեն չի հայտնաբերում: Նա վերադառնում է և զեկուցում,

թե շինականները խստիվ պահպանում են օրենքը, որը նրանց արգելում է որևէ զենք ունենալ: Ղասիբ փաշան փրփրում է. «Ինչպե՞ս եք համարձակվում պնդել, թե իմ տեղեկությունները միանգամայն սուտ են,- բղավում է նա:- Անմիջապես ետ դարձեք և գտեք զենքը: Չհամարձակվեք ձեռնունայն վերադառնալ»: Ոստիկանության կապիտանը կրկին մեկնում է Ավզուտ և քրքրում բոլոր անկյունները, տակնուվրա անում բոլոր տները ու նորից ոչինչ չի գտնում: Այնժամ կանչում է գյուղի տանուտերին. «Ինձ ուղարկել են, որ գտնեմ թաքցրած զենքը: Ասե՛ք, որտե՞ղ եք պահել»: «Բայց մենք ոչ մի զենք չունենք»: «Այն ինչ-որ տեղ պետք է լինի»: «Չավաստիացնում եմ ձեզ, որ սխալվում եք»: «Լավ, հիմա լսեք: Ես պետք է այստեղ զենք գտնեմ, անկախ նրանից, թե ձեզ մոտ կա, թե՛ ոչ: Ես չեմ կարող վերադառնալ առանց դրա: Եթե ինձ որևէ զենք չտաք, ստիպված կլինեմ իմ մարդկանց հետ տեղավորվել ձեր գյուղում»: Դա, անշուշտ, թալան ու սնանկացում էր նշանակում: Տանուտերը շփոթվում է. «Իսկ, ես ի՞նչ անեմ,- հարցնում է նա,- մենք զենք չունենք»: «Այդ դեպքում գնացեք, փնտրեք և գտեք. գողացեք, գնեք, բայց ճարեք»: Այդ նպատակով երկու-երեք հոգու ուղարկում են մոտակա քրդական գյուղը, որտեղ նրանք զնում են երեք սայլ հին դաշույններ, կայծքարի հրացաններ և ժանգոտած թրեր, ու բերում հանձնում են Ռեշիդին:

Վերջինս ցնծությամբ վերադառնում է Մուշի նահանգապետի մոտ: Ղասիբ փաշան, զննելով հավաքածուն, անչափ ուրախանում է և ասում. «Տեսնու՞մ եք, ես իրավացի էի: Ասու՞մ էի, որ այնտեղ զենք է թաքցված: Սկզբում դուք ինչպես հարկն է չէիք փնտրել: Այսուհետև ավելի ջանադիր եղեք»:

Խալիլչաուշ գյուղի (հնուս) բնակիչ Վերթո Պապիկյանը հետևյալ պատմությունն արեց իրեն խոր հուզմունք պատճառած մի դեպքի մասին, որը լույս է սփռում թուրքական արդարադատության հետաքրքիր կողմերի և հայերի գեղջկական կյանքի վրա.

«Ջունդի անունով մի քուրդ ուզում էր փախցնել իմ զարմուհուն՝ Նագոյին, բայց մենք նրան ուղարկեցինք Էրզրում և այնտեղ ամուսնացրինք մի հայի հետ: Չաճախ ենք մեր աղջիկներին ամուսնացնում երեխա հասակում՝ 11-12 տարեկանում կամ էլ նրանց տղայի զգեստ ենք հագցնում, որ փրկենք բռնաբարությունից: Նագոյի ամուսինը Չերթև գյուղի քահանայի որդին էր: Քրդերն ուզում էին ինձնից վրեժ լուծել այն բանի համար, որ այդ կերպ փրկել էի աղջկան: Ջունդին այնպես ծեծեց եղբորս, որ նա

մոտ վեց ամիս անկողին ընկավ: Այնուհետև այդ նույն քուրդը իր մարդկանց հետ քչեց տարավ իմ անասունները, հրկիզեց հացահատիկը, դարմանն ու խոտը և վերջնականապես սնանկացրեց մեզ: Երբ զարմուհիս մի անգամ հյուր եկավ մեզ, Ջուևդին և նրա քրոջը հարծակվեցին մեր տան վրա և տարան նրան: Մենք բողոքեցինք իշխանություններին՝ թե տեղական, թե Երզրումի: Երբ, վերջապես, որոշեցին հարցուփործ անել զարմուհուս, նա արդեն երեխա էր ունեցել քրոջից, և ամոթը նրան խանգարեց վերադառնալ: Նա դարձավ մահմեդական: Այնժամ մենք պաշտպանության համար հրացան գնեցինք, քանի որ զենք ունենալու արգելքի մասին դեռևս օրենք չկար: 1893 թվականին հրացանը վաճառեցինք Հաջի Դահու անունով մի քրոջի, բայց 1894 թ. ոստիկանները հայտնվեցին մեզ մոտ և պահանջեցին այն: Մենք ասացինք, որ վաճառել ենք, և քուրդը հաստատեց մեր ասածը: Չնայած դրան, ինձ ու եղբորս բանտարկեցին և ստիպեցին երկու եզ տալ երկու հրացանի փոխարեն, հետները տարան որպես մեր մեղավորության իրեղեն ապացույց: Այնուհետև մեզ ուղարկեցին Երզրումի բանտ: Այնտեղ երկար նստեցինք և մեծ տառապանքներ կրեցինք: Ութ ամիս հետո եղբայրս չղիմացավ ու մահացավ: Ինձ ազատություն խոստացան մեծ կաշառքի դիմաց, որը մեզ կհասցներ կատարյալ աղքատության: Ուրիշ ճար չունեի և տվեցի այն ամենը, ինչ ինձնից պահանջում էին՝ ընտանիքով մնալով առանց որևէ միջոցի: Դրանից հետո ինձ դատապարտեցին վեց տարվա բանտարկության»:

Արդարադատությունը հայերի համար չէ: Միայն այն փաստը, որ հայը համարձակվել է դիմել դատարան որպես բողոքարկու կամ որպես հայցվոր քրոջ կամ թուրքի դեմ, միշտ էլ բավարար հիմք է ծառայում, որպեսզի տեղի ունենա կերպարանափոխություն՝ բողոքարկուն վերածվի պատասխանողի կամ հանցապարտի, ինչը և նրան սովորաբար տանում է բանտ: Նման դեպքերում բանտը նշանակում է անցման շրջան՝ համեմատաբար ունևոր վիճակից դեպի լիակատար ընչազրկություն. բանտարկյալներին ամբողջովին պլուկում են, հետո նոր բաց թողնում: Բայց թե ինչ է իրենից ներկայացնում բանտը՝ հնարավոր չէ բավականաչափ հստակ նկարագրել: Եթե պատկերացնենք Անգլիայի հին Աստղազարդ պալատի, իսպանական հավատաքննության, հաշիշամուլների չինական որջի, դեղին տենդի հիվանդանոցի ու դանթեական դժոխքի ամենամռայլ պարունակներից մեկի համատեղությունը, ապա դա թուրքական բանտի նմանությունը կունենա: Կեղտ, զարշահոտություն, հիվանդություններ,

այլանդակություն, տանջանքներ՝ այնպիսի ձևերով ու չափերով, որ եվրոպայում չեն էլ կարող պատկերացնել. ահա դրա արտաքին դրսևորման բնութագիրը: Հոգեբանական մթնոլորտը ստեղծում է լիակատար հիասթափություն, հրեշավոր ու վայրի կատաղություն, մարդկային տառապանքներից դիվային հաճույք ստանալու ցանկություն, արիական ինքնագոհաբերում զազրելի արատները պահպանելու համար, բարոյական նկարագրի կատարյալ այլասերում, և այդ ամենը մարմնավորված է այլանդակ եակների մեջ, որոնց մարդկային կերպարը վիրավորանք է Աստծո հասցեին: Այդ ահավոր գնդաններում դիվահնար կտտանքների հարուցած աղաղակները մշտապես միախառնվում են հակաբնական հաճույքների ճիչերին, կեղտոտ երգեր են երգում՝ սրտակեղեք հեծեծանքների նվազակցությամբ. և, միևնույն ժամանակ, վաղուց արդեն կենսական ուժերից զրկված մարմիններից դուրս են թռչում հոգիները, որոնց չի ողբում ոչ ոք, բացի խոնավ պատերից, իսկ դրանց վրա սարսափելի վերքերից և ահավոր հիվանդություններից առաջացած գոլորշիները շարունակ կուտակվում ու խոշոր կաթիլներով թափվում են հատակի քարերին: Դա հիրավի հրեշավոր մղձավանջ է՝ իրականության վերածված:

Անցած մարտին բարեկամիս խնդրեցի այցելել Բիթլիսի բանտի քաղաքական հանցագործներին և խնդրել, որ տան իրենց վիճակի հակիրճ նկարագրությունը: Բանտարկյալներից չորսը պատասխանեցին մի նամակով, որը ցնցող տպավորություն է թողնում: Ահա այդ փաստաթղթի վերջին էջերը.

«Բիթլիսի բանտ, դժոխք, 28 մարտի (9 ապրիլի) 1895 թ.:

Բիթլիսի բանտում կա 7 խուց, որոնցից յուրաքանչյուրը կարող է տեղավորել 10-12 հոգու: Իրականում տեղավորում են 20-30 մարդու: Սանիտարական հարմարանքներ բոլորովին չկան: Թափուկներն ու կեղտը, որոնք պետք է այդ նպատակի համար հատկացված տեղում լցվեին, կուտակված են խցում: Ջուր չի կարելի խմել: Հաճախ հայ բանտարկյալներին ստիպում են ջուր խմել այն թասից, որի մեջ մահմեդականները լվացում են կատարում...»:

Ապա հետևում է հակիրճ, բայց ուշագրավ նկարագրությունը այն տանջանքների, որոնց ենթարկվել են նամակագրի մահացած ընկերները: «Ահա, օրինակ՝ Մալխաս Աղաջանյանն ու Սեյրան Մալխասյանը՝ Ավգուտից (Մուշ), ծեծի են ենթարկվել այնքան ժամանակ, մինչև ուշագնաց են եղել: Առաջինին շիկացած երկաթով խարանել են ութ տեղից, երկրոր-

դին՝ տասներկու»։ Սեյրանի նկատմամբ գործադրված մյուս բռնությունը չի կարելի նույնիսկ հիշատակել։ «Գոքոր Սրապյանին՝ Ավզուտ գյուղից, այնքան են ծեծել, որ կորցրել է գիտակցությունը, ապա նրա վիզն են գցել մի գոտի և քարշ տալով տարել զափթիեի սենյակն ու վրան շիկացած երկաթով 16 խարան դրել»։ Նկարագրելով մյուս տանջանքները, որոնց ինքն է ենթարկվել, օրինակ՝ մազերը փետելը, հացից ու ջրից տակահանորեն զրկելը՝ տեղում անշարժ կանգնած դիրքով, պատմողն այնուհետև հաղորդում է այնպիսի կտտանքների մասին, որոնց անգլերեն անվանումը չկա և որոնց մասին քաղաքակիրթ ժողովուրդը չի կարող լսել։ Այս նա շարունակում է. «Նույն գյուղից Արքո Մինասյանին, Կարապետ Լեալկասյանին և Իզրո Աստվածատրյանին դաժանորեն ծեծել ու ստիպել են անշարժ կանգնել երկար ժամանակ, որից հետո գլխներին լցրել են մի քանի կեղտամանների պարունակությունը։ Սեմոլ գյուղից Քորքի Մարդայանը դաժան ծեծի է ենթարկվել, փետել են նրա մազերը և ստիպել անշարժ կանգնել 24 ժամ։ Դրանից հետո Մուլազիմ-հաջի-ալին և բանտապահ Աբդուլբադիրը նրան ստիպել են այսպես կոչված Sheitantly-h* ենթարկվել, որն ավարտվել է դժբախտի մահով։ Նա 45 տարեկան էր։ Մխիթար Սաֆարյանը և Կատգո Բալբոյանը (Բուլանըխի Կակառուից) ենթարկվել են նույնպիսի կտտանքների։ Մխիթարը ընդամենը 15 տարեկան էր, իսկ Կատգոն՝ 13։ Սողո Ծարայանը՝ Ավարիցից (Մուշ), Մուշից ձեռնաշղթաներով տարվել է Բիթլիսի բանտ։ Բիթլիսում նրան դաժանորեն ծեծել են ու ստիպել քաղցած կանգնած մնալ։ Երբ նա ուշաթափ է եղել, ուշքի են բերել սառը ջրով և մտրակի հարվածներով։ Նրա մազերն էլ են փետել և մարմինը դաղել շիկացած երկաթով։ Այս ենթարկվել են այնպիսի տանջանքների, որ չի կարելի նկարագրել... Համբարձում Բոյաջյանին ձերբակալելուց հետո երեք օր պահել են արևի կիզիչ ճառագայթների տակ։ Այս տարել են Սեմալ, որտեղ նրան և ընկերներին ծեծել են ու փակել եկեղեցում։ Նրանց թույլ չեն տվել դուրս գալ նույնիսկ բնական պահանջները հոգալու և ստիպել են պղծել կնքավազաններն ու զոհարանները... Որտե՞ղ եք դուք՝ քրիստոնյա Եվրոպա և Ամերիկա։

Այս նամակը ստորագրող չորս անձանց թվում է մի շատ հարգարժան և աստվածավախ հոգևորական»*։

* Բառացիորեն նշանակում է «սատանի օղակ»։ ձեռքերը պինդ կապում են և ոտքերը բթամատերից կապած՝ ձգում ձեռքերի արանքով։ Sheitantly-h մնացած մասերը բաղկացած են սարսափելի կտտանքներից և զազրելի հանցագործությունից։

Ես անձամբ ծանոթ եմ բազմաթիվ մարդկանց, որոնք եղել են այս բանտերում։ Նրանց փորձությունների մասին պատմություններն այնքան սարսափելի են, որ դժվար կլիներ դրանց հավատալ, եթե լիովին հաստատված չլինեին նրանց մթագնած բանականությամբ, այլանդակված մարմիններով, խոր սպիներով, հրեշավոր հաշմության սարսափելի տեսարանով խեղումներ, որոնք չեն չքանա, քանի դեռ գերեզմանը կամ ցիները չեն կլլել նրանց դիակները։ Կտտանքների և բռնությունների մեջ, որ հնարում են թուրք բանտապաններն ու տեղական իշխանությունները, կա այն աստիճան աներևակայելի, զազրելի, հրեշավոր ու վայրենի մի բան, որ դրանց մասին հասարակ ու չոր հաշվետվությունը հավասարազոր է հիվանդ սատանայի ցնորամտության։ Բայց այդ ամենը բացեիբաց ու մանրամասն անհնար է շարադրել։

V

Վերը շարադրվածից հեշտությամբ կարելի է եզրակացնել, թե ինչ հիմունքներով են մարդիկ թուրքական բանտ ընկնում Հայաստանում։ Դրա համար բավական է, որ նրանք ունենան դրամ, անասուն, հաց, կին, դուստր կամ, վերջապես, թշնամիներ։ Մենք վրդովմունքով ենք կարողում վայրենի քրդերի դաժանությունների մասին, որոնք ասպատակում են գյուղերը, հարձակվում տների վրա, ոչխար փախցնում, հափշտակում ունեցվածքից այն ամենը, ինչ կարող են տանել, անպատվում կանանց և հանգիստ տուն վերադառնում այն գիտակցությամբ, թե իրենք այդ օրը բարի գործ են կատարել։ Մենք դա կոչում ենք անարգանք քաղաքակրթության հասցեին, և գուցե նման որակումը ճիշտ է։ Բայց որքան էլ դաժան լինեն քրդերի վայրագությունները, դրանք ողորմածություն են թվում թուրքական հնարների համեմատությամբ, որոնց գործողությունները հիմնված են օրենքի ու բանտի սարսափների վրա։ Նա, ով աղքատության կամ, նույնիսկ, լիակատար ընչազրկության պատճառով անկարող է լինում վճարել աներևակայելի հարկերը, ով չի ցանկանում զափթիներին իբրև «բախշիչ» տալ իր կովն ու գոմեշը, նրանց խնդրում է չանարգել իր կնոջը կամ դստերը՝ ընկնում է այն զնդաններից մեկը և երբեք այնտեղից դուրս չի պրծնի առանց անմոռանալի խարանին ենթարկվելու։ Որպես օրինակ բերենք ձերբակալման սովորական, բայց ամենակին էլ ոչ ամենավրդովեցուցիչ դեպքերից մեկը.

* Զանի որ ստորագրողներից երեքը մինչև օրս բանտում են, զգուշության համար չեն հրապարակում նրանց անունները, որոնք, սակայն, հայտնի են Foreign Office-ին (Մեծ Բրիտանիայի արտգործնախարարությանը)։

Մուշի գավառի Ավզուտ գյուղից մի երիտասարդ մեկնում է Ռուսաստան աշխատանք որոնելու և այնտեղ իր համար զբաղմունք է գտնում: Ամուսնանում է, մի քանի տարի ապրում Ռուսաստանում և 1892 թվականի վերջերին վերադառնում հայրենի գյուղ: Ոստիկանությունը իմանալով, որ «Ռուսաստանում ապրած մի հայ» է ժամանել, Ավզուտ է ուղարկում իր չորս գործակալներին՝ Իսահակ Չաուշի գլխավորությամբ: Նրանք գյուղ են մտնում մայրամուտից 2 ժամ անց. երեքը մնում են դրսից տունը հսկելու, իսկ պետը ներս է մտնում: Անմիջապես կրակոցներ են լսվում, և երիտասարդ հայն ու Իսահակը ընկնում են մեռած: Այդ դեպքի կապակցությամբ Բիթլիսի իշխանությունները Ավզուտ են ուղարկում զափթիեների մի գնդապետի՝ տեղում հսկելու, որ «արդարադատություն» իրականացվի: Վերջինս անմիջապես հավաքում է բոլոր գյուղացիներին, որոնք ոչ մի մասնակցություն չէին ունեցել միջադեպին և բանտ նստեցնում: Այնուհետև, գործակալներն ու գնդապետը բռնաբարում են Ավզուտի բոլոր աղջիկներին ու երիտասարդ կանանց, որից հետո տղամարդիկ ազատ են արձակվում, բացի 20 հոգուց, որոնց ուղարկում են Բիթլիսի բանտ: Նրանցից մեկ տասնյակն այնտեղ մահանում է, իսկ մնացած 10-ը շուտով ազատվում են: Ի վերջո, որոշվում է Իսահակ Չաուշի սպանության մեջ մեղադրել Վազեթենիս գյուղի երիտասարդ ուսուցիչ Մարգարին և, քանի որ ապացույցներ չկային, մյուսներին հրամայում են ցուցմունքներ տալ նրա դեմ:

Հայերին երբեմն ստախոս են համարում, սակայն նրանք, անտարկույս, երբեք երդվելով ցուցմունք չեն տա անմեղ մարդու դեմ, մանավանդ, եթե դրանից է կախված նրա կյանքը: Տվյալ դեպքում նրանք հրաժարվել են կրկնակի հանցագործություն կատարելուց՝ կեղծ վկայությունից և անմեղ մարդուն մահվան դուռն ուղարկելուց: Հարկադրելու համար բազմահնար ջանքեր են գործադրվել. մերկացրել և մտրակահարել են, շիկացած երկաթով այրել մարմնի տարբեր մասերն այնքան ժամանակ, մինչև որ նրանք սկսել են ցավից գոռալ: Դրանից հետո չեն թողել քնել մի քանի օր շարունակ և կրկին տանջել են այնքան, մինչև որ նրանք խոշտանգումներից կուչուծիզ գալով ու սարսափահար խոստացել են տալ պահանջվող ցուցմունքները՝ միայն թե ազատվեն տառապանքներից: Ապա նրանց անունից արձանագրություն է կազմվել, համաձայն որի Մարգարը Իսահակ Չաուշին սպանել է իրենց աչքի առաջ: Եվ նրանք ստորագրել են փաստաթղթի տակ: Այդ նույն ժամանակ Մարգարին տանջում էին բանտի մեկ այլ խցում:

Երբ սկսվել է գործի քննությունը և ընթերցվել կեղծ փաստաթուղթը, վկաները դատարանում հանել են իրենց հագուստը, ցույց տվել ահավոր վերքերը և Աստծուն վկայակոչելով ու երդվելով պնդել են, որ իրենցից աներևակայելի խոշտանգումներով կորզված ցուցմունքները կեղծ են: Իսկ մեղադրյալ Մարգարն հայտարարել է, որ այն գիշեր, երբ տեղի է ունեցել սպանությունը, ինքը Ավզուտում չի եղել:

Ի վերջո, այդ հայտարարություններն անուշադրության մատնվեցին. Մարգարն անցյալ տարի կախաղան հանվեց: «Վկաները» դատապարտվեցին տարբեր ժամկետներով բանտարկության: Իսկ զափթիեների կողմից բռնաբարված կանանց մի մասը բիրտ վերաբերմունքից մահացավ:

Բանտերում հայերի վիճակի մասին թուրքական, քրդական և ոչ մահմեդական հավաստի աղբյուրների բոլոր տեղեկությունները հիմնական գծերով համընկնում են: Վերջերս ինձ մոտ էի հրավիրել կրթված, երբեմնի ունևոր և շատ հարգարժան մի հայի, որին մի քանի անգամ բանտ էին նստեցրել, ունեցվածքին տիրանալու նպատակով: Երբ հարցրի, թե ինչպես են վարվում կալանավորների հետ, նա ասաց հետևյալը. «Հայերը միշտ էլ խոշտանգումների են ենթարկվում, բայց շատ բան կախված է տեղական պայմաններից: Որոշ բանտերում ծայրաստիճան բարբարոսաբար են վարվում. հայտնի են ահավոր այն դեպքերը, որ կատարվում են դրանց պատերից ներս: Մյուսներն այնքան էլ զգվելի չեն: Օրինակ, Էրզրումի բանտը տարբերվում է Բիթլիսի բանտից, թեև, երբեմն, այնտեղ էլ են ամենամարդկային կտտանքներ գործադրվում: Իմ կարծիքով, այդ տարբերության պատճառն այն է, որ Էրզրումում օտարերկրյա հյուպատոսները ցանկացած պահին կարող են տեղեկություններ ստանալ, թե ինչ է կատարվում տեղի բանտում, ահա թե ինչու իշխանությունները, ձեռնպահ են մնում ծայրահեղ զազանություններից:

Չարք. Էրզրումում կտտանքներ չե՞ն գործադրվում:

Պատասխան. Երբեմն գործադրվում են, բայց ոչ այնքան հաճախ, որքան այլ տեղերում: Ես այնտեղ տեսել եմ «կանգուն արկղ» և գիտեմ, որ այն օգտագործել են մինչև վերջերս, բայց կարծում եմ, որ դրանից հաճախ չեն օգտվում, համենայն դեպս ոչ այնքան հաճախ, որքան Բիթլիսում:

Չարք. Իսկ ի՞նչ բան է «կանգուն արկղը»:

Պատասխան. Փոքր պահարան է, որի մեջ կարող են խցկել միայն

մեկ մարդու, բանտարկյալը ոչ կարող է նստել, ոչ հենվել, ոչ շարժվել:

Չարք. Բայց նա կարող է հպվել պատերին:

Պատասխան. Ոչ, որովհետև պատերից դուրս են ցցված սուր մեխեր, իսկ հատակին միայն երկու ոտքի տեղ է թողնված: Բանտարկյալին այդ արկղում պահում են 24, 36, 48 ժամ, մի խոսքով, ինչքան որ պատահի, երբեմն՝ նույնիսկ նշվածից էլ ավելի: Ընդ որում, մշտաբան հսկում են երկու զափթիներ, որոնք հետևում են, որ գործողությունները կատարվեն ինչպես հարկն է: Այդ կտտանքին ենթարկվող մարդը ջուր և սնունդ չի ստանում, նրան նույնիսկ արգելվում է արկղից դուրս գալ բնական պահանջները հոգալու: Դա սոսկալի կտտանք է: Այն կիրառվել էր ուսուցիչ Մարգարի և իմ մի քանի բարեկամների ու ծանոթների նկատմամբ: Թամադյանի ծառան՝ Սողո Շարոպյանը, ինչպես նաև ավզուտցի Չակոբ Սերոբյանը, Քոսելդիից (Բուլանդիս) Սրքո Մինասյանը, Կարապետ Մալխասյանը, Գորգի Մարդոյանը և շատ շատերը ճաշակել են այդ չարանքները:

Չարք. Արդյո՞ք դա է ամենադաժան պատժամիջոցը: Իսկ շեյթանթոփիի կտտանքը, որը միաժամանակ ուղեկցվում է ֆիզիկական բռնությամբ...

Պատասխան. Դրան նույնպես քաջածանոթ եմ: Մուշից Հասանկալայի բանտ բերված հայերը (նրանցից շատերի մեղքը միայն այն էր, որ հարցաքննության ժամանակ ցուցմունքներ էին տվել հանձնաժողովի առջև Սասունի ջարդի մասին) այդ ամենասահմանելի հանցագործության զոհն են: Նրանց նկատմամբ բռնություն գործադրող բազմաթիվ պաշտոնյաների անունները քաջ հայտնի են. ես մանրամասն գրանցել եմ նրանց անուններն ու հասցեները և կարող եմ վկայակոչել բազմաթիվ ականատեսների՝ ի հաստատումն իմ կողմից բերված մեղադրանքի: Այդ չարագործները մեծ մասամբ զափթիներ են: Ես տեսել եմ նրանցից մի քանիսին և խոսել հետները, նրանք նույնիսկ չէին ջանում թաքցնել ահավոր փաստերը: Բանտապահները հարստանում են շնորհիվ այն փողերի, որ շորթում են բանտարկյալներից: Բիթլիսի բանտապահ Աբդուլքադերը, որին կարելի է մարդ անվանել միայն նրա համար, որ, պետք է ենթադրել, Աստոն արարած է, այդ միջոցով հսկայական գումարներ է ստանում: Վերջերս նա իր տան վրա ծախսել է 500 ֆունտ և, ասում են, թե երկու-երեք թուրք վաճառական առևտուր են անում նրա փողերով, մինչդեռ նրա ամսական ոռճիկը ընդամենը 50 շիլինգ է: Այդ գումարները շորթվում են

կաշառքի ձևով, ըստ որում, ոչ թե բանտարկյալներին ինչ-որ ծառայություն մատուցելու, այլ, բացառապես, խոշտանգման չենթարկելու համար: Հետևյալ դեպքը կարող է պատկերացում տալ այն «ծառայության» մասին, որի դիմաց հարկ է լինում այդքան թանկ վճարել: Մոտ 5 ամիս առաջ Կոդաբազ գյուղից 3 մարդ էր բանտ նետվել*: Այն հանգամանքը, որ նրանք 10 շաբաթ անց առանց դատի ազատ էին արձակվել, կալանավածների անմեղության ապացույցն է: Հասանկալեի բանտը, որտեղ նրանց արգելափակել էին, լեփ-լեցուն էր: Լեփ-լեցուն հասկացությունը միևնույն իմաստը չունի Հայաստանում և Եվրոպայում: Տեղի անբավարարության պատճառով հայերը նույնիսկ պառկելու հնարավորություն չունեին: Չնայած բանտախցում մի քանի քրդեր օգտվում էին առանձնակի արտոնություններից, սակայն նրանց էլ էր ընդամենը 2,5 ոտնաչափ տարածություն հատկացված: Բանտախցի անկյունում, պատի մեջ բացված էր մի անցք, որը փոխարինում էր արտաքնոցին: Երեք հայերին ստիպում են կանգնած մնալ հենց այդ անցքի մոտ, իսկ քնելու համար՝ հենվել պատին:

Նրանք այդ վիճակում էին գտնվում 15 օր շարունակ: Գարշահոտություն, կեղտ, վխտացող սողուններ, միջատներ, մի խոսքով, աներևակայելի տառապանք ու զրկանքներ: 15 օր անց, սովամահ լինելու վտանգն անտեսելով, նրանք իրենց սննդի մի մասը տալիս են քրդերին՝ ցերեկը նրանց տեղը զբաղեցնելու պայմանով: Հայերը կարծ ժամանակով որոշ թեթևություն զգացին: Սակայն քրդերը դաժանորեն պատժեցին այդ ծառայության համար. նրանց շղթայակապեցին և կրճատեցին հացի բաժինը: Նրանք, ում քրդերն օգնել էին և որոնք նրանց պարտական էին կյանքով, գյուղի ավագներն էին, և ոչ մի բանում մեղավոր չէին ու մի քանի շաբաթ անց ազատ էին արձակվել, որովհետև «ոչ մի վատ բան չէին արել»:

Եվ, այդուհանդերձ, ասում են, թե թուրքն իսկական ջենտլմեն է, մինչդեռ հայերը ստախոս են և գող: Նկատի ունենալով, թե ինչքան շատ բան է կախված տերմիններից, կարելի է մտածել, թե այդ կարծիքը ինչ-որ առումով ճշմարտանման է: Բայց ջենտլմենը անմարդկային եղանակով չի սպանի այն կատվին կամ շանը, որն իրեն հարկավոր չէ: Այդ դեպքում մի՞թե չի կարելի պահանջել, որ օտոմանյան ջենտլմենը հային սպանի՝ չենթարկելով տանջանքների: Մի՞թե վերջին լիբերալ կառավա-

* Նրանց անուններն են՝ Վերեթ, Մարտիրոս Տեր-Գասպարյան և Գյուլբեգ:

րության կողմից մարդասիրական արարք չէր լինի, եթե այնպես արվեր, որ հայերին իրենց կանանց և երեխաների հետ սպանեին առանց կտտանքների: Զլորաֆորմը, կապտաթթուն կամ էլեկտրականությունը, անշուշտ, բարելավում կլինեին «շեթանթոփիի», «կանգուն արկղի» կամ շիկացած երկաթի համեմատությամբ, և հայերն ու նրանց բարեկամները հիմք կունենային մեզանից գեթ շնորհակալ լինելու ինչ-որ բանի համար: Այս միտքը, ճիշտ է, այնքան էլ քրիստոնեական չէ, բայց, անտարակույս, համեմատաբար մարդասիրական է: Ինչ էլ որ մտածեին այս առաջարկության տեսական կողմի մասին, իրականում հայերի վիճակում գտնվող քչերը կվարանեին իրենց քույրերին, կանանց և զավակներին հնարավորություն ընձեռել վերջ տալու տառապանքներին:

«Հայերը եթե ցանկանան, կարող են բարելավել իրենց վիճակը, վերջերս ինձ ասաց մի անգլիացի՝ լուրջ ու համոզված: - Բավական է միայն, որ նրանք մահմեդականություն ընդունեն: Աստված, անշուշտ, դրա համար չի պատժի»:

Անկասկած, այդ պահից սկսած, նրանց տանջանքները կդադարեին, չէ՞ որ նահատակվելով, միևնույն է, նրանք մարտիրոսի պսակին չեն արժանանում և արհամարհված «հանցագործներ» են համարվում: Շատերն են ստիպված հրաժարվել իրենց ներքին համոզմունքից և հավատափոխ եղել, ուրիշներն էլ են պատրաստվում նույնն անել: Նրանցից ոմանք, որոնց հետ վիճակվել է զրուցել, ինձ հարցնում էին, թե արդյոք խորհուրդ կտայի՞ ընտանիքները փրկել խայտառակությունից ու մահից՝ ընդունելով, որ գոյություն ունի մեն մի Աստված, և նրա մարգարեն Մուհամեդն է: Ես պատասխանում էի՝ հույս հայտնելով (չնայած համոզված չեմ), որ քրիստոնեական եվրոպան ժամանակին օգնության կհասնի և նրանց կփրկի նման երկընտրանքի անհրաժեշտությունից: Անկասկած, եթե նրանք մահմեդական դառնան, ապա դա պետք է անեն ոչ միայն արտաքուստ: Ընկրկելն անհնար է, քանի որ ամենաահավոր ու դաժան մահը կլինի նրանց պատիժը ուրացության դիմաց: Հետևյալ պատմությունը կարող է ցույց տալ, թե հայերի համար ինչպիսի փորձություն է կրոնի խնդիրը: Այն ուսանելի է նաև այլ առումներով:

Մելիք աղան Աբրա գյուղի (Բուլանդիսի գավառակ) ազդեցիկ և ազնվական հայերից էր: Աստված նրան պարզեց էր որդիներ և թոռներ, ուներ խոշոր եղջերավոր անասուններ, հող, հաց ու անասնակեր: Դա մի յուրատեսակ հայկական Դոբ էր՝ փոքր չափերով: Այդ նույն գյուղից ազնվածին մահմեդական Զյամիլ շեյխը, նախանձելով նրա հարստությանը,

որոշում է տիրանալ դրացու ունեցվածքին, իսկ անհաջողության դեպքում՝ ոչնչացնել թե՛ ունեցվածքը, թե՛ նրա տիրոջը: Այդ նպատակով նա հրկիզում է Մելիքի խոտն ու հացահատիկը, այնուհետև շեյխի մարդիկ գալիս տանում են նրա ութ ձիերը, կտտորելով 150 ոչխար, իսկ դիերը թողնում են նեխելու այնտեղ, որտեղ մորթել էին: Կորուստը շատ մեծ էր գերդաստանի համար, նրա անդամները կարող էին սովի մատնվել: Ուստի Մելիքը գնում է Կոն, որտեղ ապրում է կայմականը, և խնդրում օրենքի պաշտպանությունը: Մինչ նա գտնվում էր Կոնում, իսկ նրա որդին աշխատանքի էր, շեյխի մարդիկ ներխուժում են նրա տուն, սպանում Մելիքի ավագ որդու երկու երեխաներին և տանում կնոջը, որը հղիության վերջին շրջանում էր: Մելիքի տղան, լսելով այդ դժբախտության մասին, մեկնում է Երզրում՝ գործը վիլայեթի իշխանություններին հանձնելու: Ի վերջո, Մելիք փաշան մեկնում է հետաքննելու գործը և գոնե փրկելու կնոջը: Անպատիժ մնացած մարդասպանը հրաժարվում է վերադարձնել երիտասարդ կնոջը, պատճառաբանելով, թե նա հրապարակավ պետք է հայտարարի մահմեդականություն ընդունելու մասին: Ապա փաշան, դիմելով Մելիքին, հարցնում է. «Ի՞նչ կասեք կամ կանեք, եթե ձեր հարսը հրապարակավ ընդունի իսլամը: - Մենք էլ, - ասում է նա, - մահմեդական կդառնանք, որպեսզի մեզանից չխլեն մեր կանանց ու դուստրերին»:

Այնժամ բերում են կնոջը, բայց տեսնելով, որ նա շրջապատված է շեյխերով և վախենում է ճշմարտությունն ասելուց, Մելիքը դիմում է փաշային. «Նա հիվանդ է, մի քանի օրից մայր կդառնա: Մինչ այդ նրան հանգիստ թողեք և առայժմ տեղավորեք Երզրումում, ձեր ցանկացած թուրքի ընտանիքում: Երկու շաբաթ հետո մենք նրան կհարցնենք, թե ինչ է որոշել»: Բոլորը դրան համաձայնվեցին, և փաշան մեկնեց: Երեք օր անց այդ կնոջ ամուսինը (Մելիքի ավագ որդին) օրը ցերեկով սպանվեց Զյամիլի ծառաների ձեռքով: Նույնիսկ թուրքի ընտանիքը, որտեղ ապրում էր կինը, սարսափի մեջ էր և շեյխերին խնդրում էր տանել նրան, որովհետև այդ ընտանիքը չէր ցանկանում որևէ առնչություն ունենալ տվյալ գործի հետ:

Շուտով Մելիքի մյուս որդին՝ Մկրտիչը, դաշտում գնդակահարում է երկու շեյխի: Դա շատ վատ, ոչ քրիստոնեական արարք էր, նման դեպքերը եվրոպայում ազնիվ մարդկանց առիթ են տալիս գանգատվելու հայերի վրիժառությունից: Մենք հասկանում ենք, որ Մկրտիչը պետք է շեյխերին հրավիրեր ճաշի կամ առնվազն նրանց հանգիստ թողնելու, թեև գոյություն ունեն բարձրակիր եվրոպացիներ, նույնիսկ քրիստոնեական եկեղեցու սպասավորներ՝ անձամբ ինձ հայտնի, որոնք ասում են՝ թող

օրինյալ լինի Աստված ամեն մի բնագրի համար, որը ընդվզում է այն կարգի դեմ, որի օրոք անասունը մարդուց երկար է ապրում:

Ինչևէ, Մկրտիչը և նրա կրտսեր եղբայրը, գիտակցելով, որ իրենք և հարազատները կործանված են, թաքնվում են Մուսաբեյի տանը և իրենց հայտարարում մահմեդական: Ապա մարդ են ուղարկում հոր մոտ՝ նրան հայտնելու, թե ինչու են այդպես վարվել, խորհուրդ տալով անել նույնը: Եվ վերջինս հետևեց նրանց օրինակին: Մուլլային հանձնարարվեց դավանափոխ ընտանիքին ուսուցանել իսլամի հիմնադրույթները և սովորեցնել մահմեդական արարողակարգը, բայց, արի ու տես, որ այդ մուլլան Մելիքի նախկին ծառան էր և ավելի շատ էր հակված ընդունելու քրիստոնեությունը, քան իր տերը՝ ղուրանի ուսմունքը: Մելիքը բարեկամաբար տրամադրված մուլլայի հետ քննարկելով գործողությունների ծրագիրը, այրիացած դստերն ու նրա հասունացած աղջկան իր երեք տղաների հետ ուղարկում է Ռուսաստան: Երբ նրանք արդեն մոտ էին սահմանին, Գեդուկ սարում քրդերը հարձակվում են նրանց վրա և փորձում խլել աղջկան: Վերջինս ամուր կառչում է մորից և հրաժարվում դառնալ այդ վայրենիների եղկելի ցանկությունների գոհը: Այնժամ քրդերը զնդակահարում են նրան: Մայրը, աղջկա դիակն առնելով մեջքին, տանում է Քահնեմանից երեք մղոն հեռավորության վրա գտնվող Հայրավանք գյուղը, որտեղ էլ հայր Ռաֆայելը թաղում է սպանված աղջկան: Որոշ ժամանակ անց Մելիքը և նրա ընտանիքի մնացած անդամները փախան Ռուսաստան՝ թողնելով տունուտեղը, հողը, անասնակերը, հացը, անասունները և, վերցնելով միայն մի քիչ փող, որն էլ քրդերը նրանցից խլեցին ճանապարհին: Բայց Մելիքը շնորհակալ էր Աստծուց, որ կարողացավ փրկել իր կյանքը*:

VI

Հայերի մեջ հետզհետե ավելի ու ավելի է ամրապնդվում այն համոզմունքը, թե կյանքը միակ աստվածային կամ մարդկային ողորմածությունն է, որի դիմաց իրենց վիճակված է երախտագիտության զգացմունքներ արտահայտել: Գիշտ է, նրանց շատ անգամ են մխիթարել հույսով, այդպես ենք վարվել նույնիսկ մենք, որ հենց սկզբից խանգարեցինք Ռուսաստանին օգնության գալու հայերին ու կառավարման լավ ծև տալու նրանց, և դրա հետ մեկտեղ թուրքիային լիակատար հնարավորություն

* Մուլլան մեկնում է մշանավոր էջմիածնի վանք և քրիստոնեություն ընդունում:

ընձեռեցինք, որ հինգ նահանգներում հաստատեր մի նոր Դահոմեա: Իրոք, երբեմն միայն անթափանցելի խավարն է մոտալուտ լուսաբացի նախագուշակը, բայց այդ արարածների համար կյանքը անհայտ քարանձավների հավերժական խավար է: Հայերը քրիստոնյա են, և նրանք իրենց հայացքը հառում են Աստծուն, իմանալով, որ չեն կարող հույսը դնել ուրիշ ոչ ոքի վրա:

Հայերի համար հեշտ չէ անցնել սահմանն ու մտնել Ռուսաստանի տարածք, եթե ոսկե կամ արծաթե դրամ կամ որևէ հագուստ ունի: Կանանց համար էլ հեշտ չէ հեռանալ երկրից՝ նախապես չենթարկվելով խայտառակության, որի հենց միայն հիշատակումից արյունն սկսում է եռալ ամոթից ու վրդովմունքից: «Այո, բայց այդ ամենը հայերը չեն զգում նույնքան սրությամբ, որքան որ կզգային եվրոպացիները», - օրերս ինձ ասաց մի անգլիացի տիկին: Միգուցե, բայց ես խոսել եմ հարյուրավոր հայ կանանց հետ և համոզված չեմ դրանում: Ինչ արատներ էլ վերագրվեն հայուհիներին, ողջախոհությունն է նրանց ամենագլխավոր առաքինություններից մեկը: Նրանց մոտ այն հասնում է աներևակայելի ծայրահեղության: Մատ վայրերում հայուհին օտար տղամարդու հետ խոսում է միայն ամուսնու ներկայությամբ: Նա նույնիսկ զրույցի չի բռնվում ազգակից տղամարդու հետ, և թե՛ երգրումի ետնախորշերում, թե՛ Սասունի հովիտներում նրա անաղարտությունը վեր է ամեն մի կասկածից: Եվ, այդուհանդերձ, կանայք մշտապես ենթարկվում են բիրտ քրդերի ու նողկալի թուրքերի վիրավորանքին, երբեմն ազատություն ստանալով միայն մահվան շնորհիվ: Բայց փողով, հագուստով կամ կանանց հետ թուրքիայից տարագրվելու դժվարությունը առավել պարզորոշ կդառնա մի քանի փաստացի օրինակով: Թուրքերը ոչ թե դեմ են հայերի հեռանալուն, այլ, ընդհակառակը (և դա բնաջնջման ծրագրի ամկայության լավագույն ապացույցն է), նրանք հայերին պարզապես վրձնում են արտասահման և հետո համառորեն հրաժարվում են ընդունել:

Սարո Հարոյանը, որին հարցրել էին, թե ինչն էր պատճառը, որ իր 10 շնչից բաղկացած ընտանիքը գաղթել էր Կետեր գյուղից (Բայազետի սանջակ), հաղորդել էր հետևյալը.

«Մենք չէինք կարող մնալ, որովհետև Ռեզեքամ բեյը՝ Ջաֆար աղայի որդին և նրա մարդիկ մեզ հետ վարվում էին ինչպես բռնակիր անասունի: Եվ մենք չէինք կարող բողոքել, որովհետև նրանք համիդիեի զինվոր էին: Ես գաղթել եմ անցյալ տարվա վերջին: Ռեզեքամը եկավ իր

մարդկանցով և, ինչպես պատերազմական ժամանակներում, մտավ հայերի տներն ու վոնդեց նրանց: Միայն յոթ ընտանիքի թույլ տվեցին մնալ: Մյուսները, չիմանալով ուր գնալ, պատսպարվեցին եկեղեցում: Մենք ստիպված էինք երեք ամիս շարունակ կերակրել քրդերին, նրանց տալ մեր հացը, ոչխարը և այլն, իսկ անասունները պահել արոտավայրում: Նրանցից մի քանիսին պետք է ծառայեինք ինչպես բեռնակիր անասուն*:

Ռեզեքամն ինքը ամեն շաբաթ այցելում էր Ղարաքիլիսա գյուղ և որպես ռազմատուգանք գանձում 10 թուրքական ֆունտ, չհաշված անասնակերը, գառներն ու մյուս ապրանքները, որոնք ստանում էին նրա մարդիկ: Վերջապես, չկարողանալով այլևս տանել այդ բեռը, մենք գանգատով դիմեցինք իշխանություններին: Նրանք մեզ վոնդեցին: Այդ ժամանակ Ղազազ թիմեր անունով մի քուրդ մեզ կարգադրեց մի փաստաթուղթ ստորագրել, որում ասվում էր, թե մենք բարգավաճում ենք և մեզ երջանիկ զգում: Փաստաթուղթը պետք է ուղարկվեր Կոստանդնուպոլիս, որովհետև այդ քուրդը ցանկանում էր յուզբաշու տեղ ստանալ համիդիեում: Թուրքը ոչ ոք չստորագրեց, և թիմերն այնպես զայրացավ, որ սպանեց Ավագին ու նրա եղբորը: Հինգ ամիս հետո նա սպանեց Միքասին՝ մանկասարգի Քրեի որդուն: Անցյալ տարի, ծմեռնամուտին Ռեզեքամ բեյը ձերբակալեց մեր հարևան Սարգսին՝ Սախայի որդուն. նա տղայի գլուխը ընկղմում էր սառը ջրի մեջ, իսկ հետո, սպասելով, որ չորանա, նավթ լցրեց ու վառեց նրա մազերը: Ապա փորձեց բռնաբարել Սարգսի քրոջը՝ Սառային, բայց վերջինիս հասցրել էին թաքցնել: Ռեզեքամի ծառան՝ Կետոն, պատվազրկեց Մուրադի կնոջը, իսկ մի քանի օր անց հայտնվելով այդ նույն գյուղի բնակիչներից մեկի՝ Աբրահամի տանը, նրան կարգադրեց գնալ աշխատելու Ռեզեքամ բեյի մոտ: Աբրահամի կինը շուտով պիտի ծննդաբերեր, և խնդրում էր, որ իր ամուսնուն թույլ տրվի մնալ տանը, բայց Կետոն հարվածեց նրա փորին, և մեկ ժամ անց երեխան լույս աշխարհ եկավ մահացած: Ոչ, մենք չէինք կարող ապրել այնտեղ, նույնիսկ եթե կենդանիներ լինեինք և ոչ թե քրիստոնյաներ»:

Մկրտիչ Մեհյանը՝ 35 տարեկան, Կուպեչերան գյուղից (Բայազետի սանջակ), հայտարարեց. «Ես գաղթել եմ 1894 թ., որովհետև Հայրա փաշան հայտնվեց 40 քուրդ ընտանիքներով, ավերեց մեր եկեղեցին և խլեց մեր ունեցվածքը»: Որոշ տարբերություններով նման դեպքեր են հաղորդվում հայկական հինգ նահանգների յուրաքանչյուր սանջակի գրեթե ամեն գյուղից: Արոգ գյուղից (Վանի սանջակ) 55-ամյա Պետրոս Քոզդյա-

* Պա հազվադեպ երևույթ է Հայաստանում:

նը հետևյալ ցուցմունքն է տվել. «Ես ընտանիքիս հետ միասին հայրենի գյուղից և երկրից հեռացա անցյալ տարվա (1894) օգոստոսին, որովհետև, թուրքական իշխանությունների դրոշմամբ, մեզ դուրս քշեցին Գալոյի որդի թրիի հրամանատարության ներքո գտնվող քրդերը: Նա նախ եկավ ու բռնաբարեց երեք աղջկա ու երեք երիտասարդ կանանց, որոնց փախցրեց տարավ: Երեք հայ փորձեցին պաշտպանել դժբախտ կանանց, որոնք աղաչում էին իրենց ազատել չարագործների ձեռքից: Բայց քրդերը երեքին էլ տեղնուտեղը սպանեցին: Նրանց անուններն էին Սարգիս, Քյաչո և Գևորգ: Հաջորդ օրը թրին իր մարդկանց հետ գյուղից քշեց տարավ ոչխարը: Մենք բողոքեցինք Վանի նահանգապետին, բայց նա ասաց, թե չի կարող միջամտել այդ գործին: 10 օր անց քրդերը նորից հայտնվեցին և տարան մեր ցորենը, գարին, անասունները և հրկիզեցին անասնակերը, որը չէին կարողացել վերցնել: Այնուհետև նրանք ավերեցին մեր եկեղեցու բեմը, հուսալով նրա տակ ոսկի և արծաթ գտնել: Մենք կրկին իշխանություններից պաշտպանություն խնդրեցինք, բայց մեզ ասացին. «Մենք ձեզ ոչխարի պես կկոտորենք, եթե մեկ էլ համարձակվեք գալ այստեղ բողոքելու բարի մահմեդականի դեմ»: Այդժամ մենք վերցրինք ինչ որ կարող էինք և ճանապարհ ընկանք դեպի Ռուսաստան: Երբ հասանք Սոկակ, մեզ վրա հարձակվեցին վեց զինված քրդեր, խլեցին մեր ամբողջ ունեցվածքը, այնպես որ, սահմանն անցանք միայն մեր հագի շորերով»:

Սարգիս Մարտիրոսյանը՝ Ուչքիլիսա գյուղից (Ալաշկերտի սանջակ), ասաց. «Ես գաղթել եմ հինգ հոգուց բաղկացած ընտանիքիս հետ, որովհետև այլևս չէի կարող ապրել այնտեղ: Քրդերը հայտնվեցին, հրկիզեցին մեր ամբողջ անասնակերը և մնացած մթերքը, որից շատ ունեինք: Այնուհետև նրանք քշեցին տարան 100 կով, 50 եզ և 300 ոչխար: Այլևս չէինք կարող տուրք վճարել և, վախենալով զափթիների խոշտանգումներից ու սովից, որոշեցինք հեռանալ: Քյաթուքում քրդերը խլեցին մեր ամբողջ ունեցվածքը և մեզ ուղարկեցին սահմանի մյուս կողմը»:

Հովե Հովյանը՝ Լիս գյուղից (Բուլանդիսի սանջակ), հետևյալ ցուցմունքն է տվել. «Ութ շնչից բաղկացած ընտանիքիս հետ գաղթեցի, որովհետև մեզ քշեցին Թերփոյ-Նեսատոյի գլխավորած քրդերը, որոնք գործում էին սուլթանական իշխանությունների համաձայնությամբ: Նա հայտնվեց մեր գյուղում և հափշտակեց 3 լուծ եզ, 70 ոչխար և 2 ջորի: Մեկ ամիս անց քշեցին տարան ևս 70 ոչխար ու 2 ջորի, իսկ հետագա-

յում՝ նաև իմ 17 ոչխարները: Մենք 250 հայ ընտանիք էինք, բայց ոչինչ չէինք կարող անել քրդերի ավազակախմբերի դեմ, որովհետև հրազեն չունեինք: Մի գիշեր նրանք ջարդեցին իմ տան դուռը, տարան մեր հագուստն ու կանանց զարդերը և 2 կով: Մողեզո թիլոն տեսնելով, որ մեր հարևաններից մեկը գեղեցիկ աղջիկ ունի, նրան փախցրեց տարավ և ստիպեց, որ մահմեդականություն ընդունի: Աղջկա հայրը բողոքեց Բիթլիսի վալիին, որը Կոպի կայմակամին հրամայեց բողոքավորին պատժել մտրակահարությամբ և 7 օրով բանտ նստեցնել: Դա կատարվեց, և երբ նրան ազատեցին, զգուշացրին, որ եթե մեկ անգամ էլ բողոքի՝ տանջամահ կարվի: Չորս ուրիշ ընտանիքի հետ որոշեցինք մեկնել Ռուսաստան: Աքաձինում քրդերը հարձակվեցին մեզ վրա և ինչ որ ունեինք խլեցին»:

Խաչո Կարապետյանը՝ Քյավուրմի գյուղից (Խնուսի սանջակ), հայտարարել է հետևյալը. «ես քառասունհինգ տարեկան եմ: Ընտանիքով գաղթելուս պատճառն այն է, որ թուրքական իշխանությունները Քյասոյի գլխավորած քրդերին թույլ էին տվել թալանել ինձ: Դրանից հետո թուրք ժանդարմները եկան ինձ մոտ և տուրք պահանջեցին, որը ես չէի կարող վճարել: Չափթիեների պետն ասաց՝ դու փող չունես, բայց գեղեցիկ կին ունես, նրան տուր ինձ, և ես քեզ ստացական կտամ, որ հարկերը մուծել ես: Կինս թաքնվեց մի ուրիշի տանը, և երբ թուրք պաշտոնյան տեսավ, որ չի կարող նրան պատվազրկել, ինձ պատժեց: Նախ վրաս սառը ջուր լցրին, հետո երեսս պռտեցին թրիքով ու ցեխով, իսկ վերջում վզիս գոտի հագցրեցին: Հետո ինձ քարշ տվեցին գյուղով մեկ: Երբ դա ավարտվեց, ինձնից խլեցին եզս, որն իմ ամբողջ ունեցվածքն էր, եթե այդ եզը չլիներ, նրանք ինձ կզրկեին կյանքից: Դրանից հետո ընտանիքիս հետ փախա: Մենք ունեինք ընդամենը երկու թուրքական ֆունտ: Սակայն զինվորները մեզ կանգնեցրին և խլեցին այդ փողը: Այնպես որ, մենք Ռուսաստան ոտք դրեցինք դափ-դատարկ»:

Բնաջնջման ծրագիրը ակներևաբար գործում է կանոնավորապես ու հստակ: Քրիստոնյա բնակչությունը ոչնչացվում է, գյուղերն անցնում են այլոց ձեռքը գրեթե մույնքան արագ, որքան արագ փոփոխվում են գավեշտական օպերայի դեկորները, ու դրա հետ մեկտեղ գաղթը դեպի Ռուսաստան և թաղման թափորները դեպի գերեզմանոց աճում են: Այստեղ նպատակահարմար չէ տալու ցանկն այն գյուղերի, որոնք մահմեդականություն են ընդունել, բայց մի բնորոշ օրինակ կօգնի պատկերացում կազմելու այժմ տեղի ունեցող գործընթացի մասին: Ալաշկերտի գավա-

ռում, որը սահմանակից է Ռուսաստանին, Ղարաքիլիսայից արևելք կա հինգ գյուղ՝ Կեդր (կամ Կետեր), Մանկասար, Ջաջան, Չիրո և Կուբկերան: Էյուբ փաշան իր որդիներին ուղարկել էր, որ գրավեն այդ գյուղերը: Նրանք գալախիլ ցեղի քրդեր են և բոլորն էլ համիդիեի սպաներ: Գեներալ Էյուբն ունի երեք որդի՝ Ռեսզո բեյ, Կանիդ բեյ, Յուսուֆ բեյ, և այդ քաջարի սպաներն իրենց զինվորների հետ անցյալ գարնանը եկան ու գրավեցին հիշյալ գյուղերը: Այն ժամանակ այնտեղ կար մոտ 400 հայ ընտանիք, այսինքն, մոտավորապես 3000 քրիստոնյա բնակիչ: Հիմա այդ տեղերում ոչ ոք չի մնացել: Նախկին բնակիչներից միայն մեկը՝ Ավետիս աղա անունով, մնացել է երկրում, բայց ապրում է մի այլ գյուղում՝ Յունջանում: Նա հարուստ մարդ էր, երբ հայտնվեցին քրդերը՝ աղքատ դարձավ: Հայերը մի քանի անսվա ընթացքում բոլորովին վտարվեցին հզորագրու միջոցներով: Ահա մի օրինակ. մի անգամ քրդերը հանդիպում են դաշտից հացահատիկը տուն տանող Գուգոյի որդուն՝ Մարգարին և պահանջում նրա սայլը: Նա պատասխանում է, որ այն զբաղված է, ինչպես իրենք տեսնում են, բայց հետո կարող է կատարել նրանց ցանկությունը: Չհնազանդվելու համար տեղնուտեղը սպանում են Մարգարին և դիակը թողնում սայլին: Երեսուն գյուղացիներ իրենց երեխաների հետ գնում են Ղարաքիլիսա, որ բողոքեն կայմակամին: Վերջինս նրանց ստիպում է դրսում սպասել տասնմեկ օր, ապա, լսելով նրանց, ասում է՝ կարող եք մեկնել Ռուսաստան:

Բիթլիսի վիլայեթում (Բուլանըխի գավառակ և Մուշի գավառ) Խաչ անունով գյուղ կա: Հիմա դա մահիկի գյուղ է: Այդ հանկարծակի փոփոխությունը կատարվել էր նույն՝ վերը նկարագրված ձևով: Մուհամեդ էմինը առաջնորդել էր քրդերի հրոսախումբը (ջիդրաքլի և քասփաքլի ցեղերից) և գրավել գյուղը, այսինքն գրոհով վերցրել էր այն և իր իսկ պատկերավոր արտահայտությամբ՝ «նստել այնտեղ»: Գյուղը գտնվում է թուրք փոխնահանգապետի նստավայրից ընդամենը հինգ մղոն հեռավորության վրա: Բայց նա, ի ղոժբախտություն բնակչության, նույնիսկ մատը մատին չտվեց, և բոլոր գյուղացիները ոչխարների պես դուրս քշվեցին:

Դրանից հետո հաղթողներն սկսեցին թալանել հարևան գյուղերը և, հատկապես, Փիրանը, որը գտնվում էր մեկ մղոն հեռավորության վրա: Այս գյուղերն էլ կանցնեին մահմեդականներին, եթե դրանց տանուտերեից մեկի գլխում չծնվեր երջանկաբեր գաղափարը՝ մի քրդի առաջարկել իր մարդկանցով տեղափոխվել Փիրան: Նա ստացավ քսան վարատեղ,

տասը մարգագետին և մի մեծ երկհարկանի տուն, որը հատուկ նրա համար կառուցվեց բիբլիոսցի ճարտարապետի կողմից: Դրա դիմաց քուրդը հանձն առավ հայերին պաշտպանել Մուհամեդ էմինից և նրա լիտի կտրիճներից:

Երբ ես մեկնում էի Հայաստանից, Խնուսի շրջանի առավել աչքի ընկնող 306 ներկայացուցիչներ իրենց ստորագրությամբ ինձ տվեցին մի նամակ, որը խնդրեցին հանձնել «Անգլիայի մարդասեր ու մեծահոգի ժողովրդին»: Այդ փաստաթղթում արդարացիորեն ասվում էր. «Մենք հանդիսավորապես հավաստիացնում ենք ձեզ, որ Սասունի կտտորածը միայն մի կաթիլն է հայերի արյան այն օվկիանոսում, որը ռուս-թուրքական պատերազմից հետո աստիճանաբար և լռելյայն հեղվում է կայսրությունով մեկ: Տարեցտարի, ամսեամիս, օրեցօր անմեղ մարդկանց, չբացառելով կանանց ու երեխաներին, զնդակահարում են, խողխողում ու սպանում իրենց տներում ու դաշտերում, բարբարոսական միջոցներով խոշտանգում գարշելի բանտերում կամ կործանման դատապարտում աքսորավայրում՝ Արաբիայի կիզիչ արևի տակ: Մինչ խաղարկվում էր այդ երկար ու սարսափելի ողբերգությունը, հանուն գթասրտության չհնչեց ոչ մի ծայն և չմեկնվեց մի ձեռք, որն օգներ մեզ: Այդ ողբերգությունը շարունակվում է մինչև օրս, բայց այժմ մտել է արդեն իր եզրափակիչ փուլը, և հայ ժողովուրդը գտնվում է վերջին շնչում: Մի՞թե եվրոպայի կարեկցանքը պետք է արտահայտվի մեր գերեզմաններին տնկվող խաչերի ձևով միայն»:

Ես ստացել եմ նաև երկու սրտակեղեք կոչ Հայաստանի կանանցից, որոնք հավաստված են նրանց ստորագրություններով և հասցեագրված Անգլիայի իրենց քույրերին: Նրանք համեստորեն ընդամենը պաշտպանություն են խնդրում անպատվությունից: Սակայն, քանի դեռ ընդհանուր ընտրությունները մեզ չեն տվել ուժեղ կառավարություն՝ որոշակի մտադրություններով, թվում է, թե այդ կանայք նույնպես խնդրում են անհնարինը:

Անգլիական ժողովուրդը նույնիսկ աղոտ պատկերացում չունի այն մասին, թե ամբողջ Հայաստանում երիտասարդ կանայք և աղջիկները ինչպիսի խայտառակության են ենթարկվում թուրք զինվորների, գափթիներին, քուրդ սպաների և ելուզակների կողմից. ընդ որում, նրանց խայտառակությունն ուղեկցվում է այնպիսի ահավոր դաժանություններով, որոնք ավարտվում են տանջալից մահով: 11 կամ 12 և, նույնիսկ, 9

տարեկան աղջիկները խլվում են ընտանիքից և բռնությունների զոհ դառնում «մարդկանց» կողմից, որոնց անունները հայտնի են և որոնք իրենց արարքներով արժանանում են օրենքի ու կարգուկանոնի ներկայացուցիչների հավանությանը: Այդ ներկայացուցիչներն իրենք հրեշներ են, անասուններ, որոնց կրքերը մահացու թույնով կործանում են «քնքուշ, անաղարտ և անմեղ կյանքեր»:

Անվերջ առևանգումները, բռնաբարությունները, վիրավորանքները, որոնք կատարվում են անողոք դաժանությամբ, դարձել են Հայաստանի առօրյա կյանքի սովորական երևույթ: Եվ թուրք «ջենտլմենը» հավանությամբ ժպտում է: Անձամբ ես տեղեկություններ եմ հավաքել 300 նման դեպքերի մասին և լսել անհամար թվով:

1893 թվականին համիդիեի զինվորները թորթան գյուղում հայտնվելով են Կունարոյի տանը, հրամայում անկողին գցել և ապա բոլոր երիտասարդ կանանց ստիպում են ծառայել իրենց նողկալի բնագղներին: (Հակոբ Տեր-Մարտիրոսյանի և ուրիշների ցուցմունքները): Երզրումի և Տրապիզոնի միջև ընկած Բայբուրդում զինվորները առևանգել էին Հեյրանի դստերը՝ Թենեդոյին և ապա հարկադրել ընդունելու մահմեդականություն: (Հարություն Հարությունյանի ցուցմունքը): Խնուսի սանջակի Դուման գյուղում Քալոն և նրա ընկերները առևանգում են հայ քահանայի երիտասարդ դստերը, բռնաբարում և ստիպում ընդունել իսլամը: Այդ նույն գյուղում Մուշաֆին բռնաբարում է Մեբրոյի դստերը՝ Վառոյին և ստիպում մահմեդական դառնալ: Թուրթանում Ասոյի դուստրը՝ երիտասարդ Դիլբանը, առևանգվել էր երկու քրդերի կողմից: Թուրքական իշխանություններին ուղղված դիմումները ապարդյուն էին եղել: Մի քանի օր անց թուրքերն իրենք, թվով հինգ հոգի, առևանգում են ուրիշ երիտասարդ աղջիկների՝ Թուլերանին և Յաղուդին: Մարտիրոս Ենգոյանին՝ Բաղիվեղան գյուղից (Հասանկալայի սանջակ), ստիպում են տալ 12 ձի, պահել երեք քրդի, ապա պատվազրկում են կնոջը (նրա սեփական ցուցմունքը): Անցյալ տարի մի ջահել աղջկա՝ Մարիամ անունով, որը Սողոմոնի դուստրն էր (Զորտագ գյուղից), առևանգեց Քալոն և տարավ ու ստիպեց մահմեդականություն ընդունել: 1893 թվականին 6 քրդեր հայտնվեցին Գեղի շենում, մտան Կարապետ Կիրակոսյանի տունը, տանտիրոջն ստիպեցին իրենց առատ սնունդ տալ, իսկ ձիերին՝ կեր: Կշտանալով, նրանք գնացին այգի և այնտեղ այնքան խակ միրգ ու վարունգ կերան, որ հիվանդացան: Նրանք Կարապետին մեղադրեցին, թե նա է իրենց թունավորել, և պատժեցին «ըստ արժանվույն»՝ տանտիրոջը պինդ

կապեցին տան սյուներից մեկին, հետո ճանկեցին կնոջը և հերթով պատվազրկեցին: Դրանից հետո դժբախտին հայտարարեցին, որ կազատեն, եթե որոշ գումար վճարի:

Նոյեմբերի 7-ին Բայազետից մի թուրք Ավետիս Քրմոյանից պահանջում է վճարել ոչ մեծ պարտքը: Հայն այդ ժամանակ այդքան գումար չի ունենում և պարտատիրոջը խնդրում է մի քանի շաբաթ սպասել: Թուրքը մերժում է և պահանջում Քրմոյանի կնոջը՝ որպես գրավ պարտքի դիմաց: Աղերսանքն ու արցունքները ապարդյուն էին. կնոջը տարան և հարկադրեցին մահմեդականություն ընդունել: Նա այլևս երբեք չի կարող վերադառնալ իր անուսնու մոտ:

Քասո Վերան գյուղում (Բասեն) Սելվի անունով մի աղջկա, հոր պարտքի դիմաց, թուրքը գրավ է վերցնում: Պարտատերը նրան իր մոտ պահում է երեք ամիս և պատվազրկում. նա չի համաձայնվում բաց թողնել աղջկան, մինչև որ Կիրակոս Հովհաննիսյանը չի երաշխավորում պարտապանի փոխարեն: Սակայն թուրքը աղջկան որպես գրավ պահելու իրավունք ունի այնքան ժամանակ, քանի դեռ պարտքը չի վճարված: Այսպիսի փաստերը բացառիկ չեն. թեև անձամբ ինձ հայտնի է միայն երեք նման դեպք, բայց այդ կարգի 20-ից ավելի փաստերի մասին լսել եմ Հայաստանի տարբեր մասերում:

Անցյալ տարվա Ճենոյան տոնի հաջորդ օրը Սեյրան Սարգսյանը՝ Օզադ գյուղի (Մուշ) շինական, հանկարծակի ունեզրկվեց ու աղքատացավ Մաղսոն անունով մի քրդի ձեռքով, որը, ինչպես նրա բոլոր ընկերները, հիմքեր չունի վախենալու օրենքից: Մաղսոնը հրկիզել էր Սարգսյանի հացահատիկի ամբարը և բռնաբարել ու տարել նրա երկու աղջիկներին: Հարկ է նշել, որ այդ աղջիկներից մեկը՝ Ֆիդանը, 12 տարեկան էր, իսկ նրա Ալինազդ քույրը՝ ընդամենը 9: Իսկ Մաղսոնը: Նա վայելում է իր դավանակիցների խոր հարգանքը, որոնք միշտ հրճվում են, երբ քրիստոնյաները՝ տղամարդ, թե կին, կրոնական խավարից դիմում են «հավատի աղբյուրի լույսին»: Ահա թե ինչու էին մահմեդականները գովում այն քրդերին, որոնք անցյալ տարվա դեկտեմբերի 23-ին առևանգել էին Յոնջալու (Բուլանջիս) գյուղից Քատղիզի փոքր դստերը, և հավանություն տալիս քրդերի առաջնորդ Թիջինի երկու ծառաներին, որոնք, հայտնվելով Շերվանշեյզ գյուղում (Բուլանջիս), բռնաբարել էին Սերգո Դուշոյանի զարնուհուն՝ Վարդուհուն, և նրան հարկադրել հավատափոխ լինել: Նման արարքները արժանիք են համարվում:

Ոչ միայն անօգուտ, այլև հաճախ միանգամայն վտանգավոր է բողոքներով իշխանություններին դիմելը, որոնք մեծից փոքր հենց իրենք են մասնակցում այդ արևելյան «մարգածևին»: Քյաթիբ Ալայը օրը ցերեկով մտել էր Հովհաննես Գուլիկյանի տունը (Խնուսի Քարատիզուբան գյուղ), առևանգել Հովհաննեսի 15-ամյա դստերը և ուղարկել Տրապիզոն: Հայրը բողոքել էր, իշխանություններին խնդրել վերադարձնել դստերը, և հանուն արդարության պետք է նկատել, որ, ինչքան ինձ հայտնի է, նա պատժի չէր ենթարկվել:

Արաբկիրի փոխնահանգապետը ձերբակալել և քաղաքից վտարել էր մի քանի տղամարդու, որոնց կանայք իրենց գեղեցկությամբ աչքի էին ընկնում ամբողջ Հայաստանում: Այնուհետև, երբ նա ձեռնամուխ էր եղել իր մտադրության իրականացմանը, դժբախտ կանայք ինքնասպան էին եղել տներում՝ հրաժարվելով ներս թողնել փոխնահանգապետին և նրա մարդկանց, որոնք իրենց զոհերին ասել էին, թե ամուսինները կվերադառնան միայն այն դեպքում, եթե նրանք բավարարեն իրենց ցանկությունը:

Հետևյալ դեպքին ես հետևել եմ շահագրգիռ հետաքրքրությամբ, քանի որ լավ եմ ճանաչում զոհին և նրա ընտանիքին: Նրան անվանում էին Լուսինե Մուշեղ, ծնունդով Խնուսաբերդ գյուղից էր: Լուսինեն ծնվել էր 1878 թ. և մանկուց հաճախում էր երգումի հայկական քարոզչական դպրոց, որտեղ դասավանդում էին ավետարանական եկեղեցու վարդապետությունը, որի նկատմամբ հայրը՝ Աղաջան Քամայանը, մեծ հակում ուներ: Հայ աղջիկները մշտապես ենթակա են թուրքերի ու քրդերի կողմից առևանգվելու վտանգին, իսկ ծնողներին ընդմիշտ տանջում է երեխաների պաշտպանության հոգսը այդ դժբախտությունից, որը երբեմն վերջանում է մահով: Պաշտպանության միջոցները, որոնց դիմում են հայերը, շատ վաղ ամուսնություններն են կամ՝ աղջիկներին տղաների նման հագցնելը*: Ես գիտեի երեխաների, որոնց դպրոցից հանում էին, պսակում և հետո, նրանց ամուսնական կյանքից մի քանի ամիս անց, նորից դպրոց ուղարկում: Հենց այդպես էլ եղել էր Լուսինեի հետ, նրան դպրոցից վերցրել էին 14 տարեկանում, պսակել նույն տարիքի Մելիք անունով տղայի հետ, և երբ ամուսնու հետ հանգրվանել էր նրա հոր հարկի տակ, կրկին բողոքական դպրոց էին ուղարկել: Մի անգամ, գիշերը, երբ ամուսինը բացակայում էր, նրան առևանգել էին մի քանի տղամար-

* Օրինակ, Իշկու գյուղում Թեման աղայի դուստրը հագնում էր տղայի պես: Դրա համար աղջկան ձերբակալել էին և մի որոշ ժամանակ պահել երգումի բանտում, քանի որ դա նույնպես հանցագործություն է համարվում:

դիկ, որոնք նրա մազերից քարշ տալով՝ բերանը փակել էին ու տարել Յուսուֆի բեյի տուն: Այդ մարդը տեղի նահանգապետի որդին էր: Նա պատվազրկել էր մանկամարդ կնոջը և հաջորդ օրը տուն ուղարկել, բայց ամուսինը հրաժարվել էր ընդունել նրան, և այժմ նա զրկված է մերձավորներից ու միայնակ է*:

Լուսինեի հայրը բողոքով դիմել էր համիդիեի գնդապետին և խնդրագիր ներկայացրել ծխական քահանային: Երզրունի արքեպիսկոպոսը նույնպես այդ գործը վերցրել էր իր ձեռքը և դիմել վիլայեթի գեներալ-նահանգապետին և Խնուսի դատարան: Բայց ամեն ինչ անօգուտ էր եղել: Լուսինեն այժմ թշվառ է: Անզլիացի կանանց ուղղված իր կոչում, որն անչափ երկար է ու պարզունակ և չարժե այստեղ ամբողջությամբ մեջբերել, նա ասում է. «Մենք համբերատարությամբ ենք կրում տառապանքները, երբ մեզնից խլում են մեր հացը, յուղն ու մեղրը և մեզ թողնում որպես սովյալ աղքատներ. մենք գլուխներս կախում ենք տխուր հնազանդությամբ, երբ քրդերն ու թուրքերը կոտորում են մեր ազգականներին: Բայց մի՞թե մենք պետք է լռենք ու հնազանդվենք նույնիսկ այն ժամանակ, երբ մեր ցեղը թունավորվում է բուն արմատից: Երբ մայրերն ու աղջիկները բռնաբարվում են վայրենիների կողմից: Ասացե՛ք, քրիստոնյա քույրեր, մի՞թե իրոք ոչ մի միջոց չկա այդ չարիքի դեմ... Մենք ոչ վրիժառություն ենք խնդրում, ոչ էլ արտոնություններ: Մենք միայն խնդրում ենք, որ... բայց արդյո՞ք պետք է դա բացատրենք անզլիացի մայրերին, կանանց ու քույրերին... Թեև մենք հայ ենք, բայց քրիստոնյա ենք. ինձ, ինչպես որ ձեզ, դաստիարակել են բողոքական դպրոցում. ինչպես որ դուք, ես էլ ենք բարոյական կանոնները քաղում Աստվածաշնչից, ինձ, ինչպես ձեզ, սովորեցրել են մտածել ու զգալ... Ի սեր Աստծո, որին մենք ձեզ հետ միասին երկրպագում ենք, օգնեք ձեզ, քրիստոնյա քույրեր, քանի դեռ ուշ չէ, և նախապես ընդունեք իմ ժողովրդի մայրերի, կանանց, քույրերի ու դուստրերի և նրանց հետ միասին իմ երախտագիտությունը, որի համար, չնայած մատաղ հասակիս, մահը տենչալի փրկություն կլինեք»:

Ստորագրված է՝ Լուսինե Մուշեղ

VII

Ես ստացել եմ նաև Խնուսի մի քանի հարյուր հայուհիների՝ անզ-

* Նա ինձ է հանձնել անզլիացի կանանց ուղղված կոչը իր ստորագրությամբ և լուսանկարով:

լիացի կանանց ուղղված կոչը. նրանք աղերսում են, որպես մեծագույն ուղորմածություն, իրենց պաշտպանել այն դաժան վերաբերմունքից, որին ենթարկվում են: Այդ կոչն այստեղ տպագրելն անօգուտ է, գրավոր կոչերը հազվադեպ են ուժեղ տպավորություն թողնում: Եթե ընթերցողը տեսներ նրանց՝ այդ դժբախտ կանանց, ինչպես ես եմ տեսել ու լսել նրանց տխուր պատմությունը իրենց իսկ շուրթերից, պարզ, անպաճույժ խոսքերով, որոնք ավելի ազդու էին դառնում հառաչանքից ու հեկեկանքից և արտացոլում իրենց աղքատությունն ու դժբախտությունները, այն ժամանակ նա կարող էր պատկերացում կազմել Չայաստանում տիրող վիճակի մասին, վիճակ, որի համար կրոնապետության վաղնջական ժամանակներում հանցագործների գլխին երկնային հուր կթափվեր: Օրինակ, Բեգլի-Ահմեդ գյուղում ես հանդիպեցի մոտ 28 տարեկան մի ցնցոտիավոր կնոջ՝ 12 տարեկան գունատ, հյուծված տղայի հետ, որը տառապում էր սաստիկ հազից և տենդախտով հիվանդ 6-7 տարեկանի տեսք ուներ: Ես նրան խնդրեցի պատմել իր գլխով անցածը, և ահա թե նա ինչ ասաց.

- Իմ անունը Ազիլաս Մանուկյան է: Ես Զըռթ գյուղից եմ (Խնուսի գավառակ): Մենք հիանալի էինք ապրում, բայց քրդերը մեզնից խլեցին այն ամենը, ինչ ունեինք՝ բուրդը, էֆենդի: Չնայած դրան, խեղճ ամուսինս շարունակում էր աշխատել ինձ ու երեխայիս պահելու համար, թեև մեզ կարգադրել էին հեռանալ: Մի անգամ, ցերեկով, երբ ես ամուսնուս ուտելիք էի տանում դաշտ, նրանք հարվածեցին գլխիս և պատվազրկեցին...

- Դա պատահեց կեսօրին, մայրիկ, երբ դու հայրիկին հաց էիր տանում,- ընդհատեց ուրվական երեխան:

Կյանքումս երբեք ավելի վշտալի տեսարան չէի տեսել՝ ցրտից դողացող երկու անհույս էակներ, և այդ մահացող երեխան, որն այնպես միամտորեն պատմում էր, թե ինչպես մի քանի հարևան քրդեր իր աչքի առաջ պատվազրկել էին մորը*:

Ապա նա շարունակեց.

- Ես բողոքեցի ավագ սպային՝ շեյխ Մուրադին, բայց բիմբաշին վայրենաբար խփեց գլխիս ու մեջքիս և դուրս շարտեց: Այնուհետև, անցած զարմանը, երբ ամուսինս հնձել էր հացահատիկը, Ալի Մահմեդը եկավ ու սպանեց նրան:

- Սպանեց սունիով, մայրիկ,- ասաց երեխան:

- Այժմ մենք միայնակ ենք աշխարհում, թափառում ենք և մուրացկա-

* Ես ունեմ այդ դժբախտ կնոջ լուսանկարը:

նություն անում, և ոչ ոք մեզ չի ճանաչում,- ասաց կինը:
Նրան տալով մի քանի մետաղադրամ, շտապեցի հեռանալ՝ ապարդյուն ջանալով թոթափել այն ահավոր տպավորությունը, որ սարսափելի ուրվականի նման հետո ինձ հետապնդում էր շարունակ:

Սասունի կոտորածը սահմակեցրեց ամենաքար սրտերն անգամ: Բայց այդ ջարդը երկնային ողորմածություն էր՝ համեմատած այն դժոխային արարքների հետ, որոնք կատարվում են ամեն շաբաթ ու ամեն օր՝ տարին բոլոր: Սովալլուկ երեխաների սրտակեղեք հեծածանք, ժերունիների հառաչանք, որոնց վիճակվել էր տեսնել աննկարագրելի բաներ՝ բռնաբարվող ու քնքուշ մանկիկների սարսափելի ճիչեր, մայրերի ողբ, որոնք իրենց զավակներից զրկվել են այնպիսի ոճրագործ եղանակներով, որոնց համեմատությամբ սպանությունը բարերարություն կլիներ, կանանց անմարդկային ծղրտոցներ, որոնք զալարվում են վազերի տակ, դրանք անապատում մեռնողների արյան և տանջանքների անգոր ու զուր ճիչերն են, որոնք արծագանք չեն գտնում ոչ երկրի վրա, ոչ երկընթում: Այդ ամենը ստվերում է թողնում Սասունն ու նրա սարսափները:

Այսպիսին են այն եղելությունները, որոնց համար մենք բարոյական պատասխանատվություն ենք կրում: Եվ չնայած լիբերալ կառավարությանը հայտնի են եղել այս փաստերն ու սրանց նմանները, սակայն լորդ Քիմբեռլեյը անկարելի էր համարել հանդես գալ դրանց դեմ և նպատակահարմար չէր գտել դրանք հրապարակել: Բարեբախտաբար, լուրջ հիմքեր կան ակնկալելու, որ լորդ Սոլսբերին՝ միակը անգլիացի բոլոր պետական այրերից, որն ըստ երևույթին հասկանում է այդ կնճռոտ հարցի բոլոր դժվարությունները, իրական միջոցներ կգտնի անհապաղ վերջ տալու հայկական դժոխքին:

Եւստ որն անձն, և ոչ ոք մեզ չի մտնուցում, և անց կրնց:

Ելան արեալ մի քանի միջաբարդանք, յուսանել հետանալ՝ պատարան ջանացալ յորակել: Այն անապիտ արագաբարձունց, որ աստիճանից արվախանի նման հետո ինձ հետապնդում էր շարունակ:

Անասնի կոտորածը սանձակեցրէս անմարտ պոռոտն անգամ՝ մայր այդ քաղցը հոգեմային ուրբաճածություն էր՝ համեմատած այն դժուրային արարքներու հետ, որոնց կատարելում են անձն բարար ու անննձը՝ սուղիմ բոլոր, Առաջուկն երկխոսները պարանկոյր եզծեճանք, Օճրուկներն հետապնդ, որոնց լինակելն էր տեսնի, անկարողելի բաներ յոնարարվող ու քննուչ մանկիկնկի ապրուստի միջեր, մայրեր ողջ, որոնք իրենց զավակներից զրկելն են այնպիսի ոճիազորք եղանակներով, որոնց համեմատութեամբ տարբերութեամբ կրկնելու, և անձանց անմարտութիւնն զորոնք արեալ անցողի տակ:

ԷՄԻ ԴԻԼՈՍ
ԻՐԱՎԻՃԱԿԸ ԹՈՒՐՔԱՅԱՅԱՍՏԱՆՈՒՄ

որոնք անմարտութիւնն զորոնք արեալ անցողի տակ, որոնք անմարտութիւնն զորոնք արեալ անցողի տակ, որոնք անմարտութիւնն զորոնք արեալ անցողի տակ, որոնք անմարտութիւնն զորոնք արեալ անցողի տակ:

Այսպիսին են այն եղելութիւնները, որոնց ամառ մենք բարբառանք քառասունամտութեամբ ենք կրում: Եվ չնայած լիեմուս կատակարարանը հաշտնի են արել այս փառտերն ու սրանց ինձաները, ստիպել լորդ Քլեմենտից անմարտելի էր համարել խանդես զեւ դրանց դեմ և նպատակաւորմամբ ընդ զոնել դրանց հրամարտել: Բարեբախտաբար, յուրջ կիմեր կան անկարողութեւ, որ յորդ Արտերնին՝ միայն անցողիցն բոլոր պետական պրոբից, որն ըստ երևուցին հասկանում է այդ կենտուր հաշտն բոլոր դժվարութիւնները, իրանքան ժիշուցման կատար անտարտ վերջ տալու հայկական դժուրին: